

Տ. Տ. Մ Ա Տ Թ Է Ո Ս Բ.

ՎԵՀԸՓԸՌ ԵՒ ՍՐԲԸՋՆԸԳՈՅՆ ԿԸԹՈՒՂԻԿՈՍ

ԱՄՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Դեկտեմբերի 11-ին լուսադէմին Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Մաթէոս Բ. Կաթուղիկոսն Ամենայն Հայոց հանգեաւ ի Տէր:

Իսկոյն իմաց տրուեց Սինօզի անդամներին, Մայր Աթոռիս բժշկին, որոնք անմիջապէս ժողովուեցին վեհարան. բժիշկը յայտնեց, որ Նորին Սրբութիւնը վախճանուել է սրտի կաթուածից մօտաւորապէս լուսադէմին: Հետզհետէ խմբուեցին վեհարան միաբանները:

Մայր Տաճարի մահադուժ զանգահարութեամբ տարածուեց վեհափառի մահուան բօթը:

Սինօզի անդամները, պրօկուրօրի պաշտօնակատարը և գործավարները սկսեցին կատարել օրէնքով և սովորութեամբ սահմանուած գործողութիւնները. այն է, արձանագրութիւն կազմեցին վեհ. Հայրապետի մահուան մասին, օրագրով Սինօզի աւագ անդամ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին ճանաչեցին Կաթուղիկոսական Տեղակալ, որ հեռագրներով հաղորդեց Նորին Սրբութեան մահը Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքային, Ներքին Գործերի Նախարարին, Սոյ Ս. Կաթուղիկոսին, Կ. Պօլսոյ և Երուսաղէմի պատրիարքներին, Ռուսաստանի և արտասահմանի հայ առաջնորդներին և Երևանի նահանգապետին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մենք, ներքոյ ստորագրողներս, այսօր առաւօտեան 9 ժամին հրաւիրուեցինք Վեհարան, ուր մեզ յայտնեցին, որ Նորին Սրբութիւն Տ. Տ. Մատթէոս Բ. առաւօտեան լուսադէմին աւանդել է հոգին. Մայր Աթոռի բժիշկ Տէր Խաչատրեանը յայտնեց, որ Նորին Սրբութեան մահը առաջացել է սրտի կաթուածից (параличъ сердца): 1910 թ. 11 դեկտեմբերի ի վեհարան ս. Էջմիածնի:

Անդամք Սինօզի

Բժ. Տ. Խաչատրեան.

Կ. Պ. Պրօկուբօրի Սինօզի

Կ. Պ. Ատենազարի

11 դեկտեմբ. 1910 թ. Լսեցին զեկուցումն, ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Մատթէոս Բ. այս առաւօտ լուսադէմին սրտի կաթուածից (параличъ) վախճանուել է. ուստի Հրամայեցին. նախ՝ Նորին Սրբութեան մահուան մասին հեռագրով յայտնել ներքին գործերի Պ. Նախարարին և Կովկասի Փոխարքային և տեղեկութիւն տալ թեմակալ առաջնորդներին, պատուիրելով վերջիններին կարգադրել հրաւիրել քաղաքների և գիւղերի հոգևորական և հաւատացեալ աշխարհիկ դասին կատարել եկեղեցիներում հոգեհանգիստ և մատուցանել պատարագ յիշատակելով Նորին Սրբութեան անունը աղօթքներում և այլ քարոզներում, մինչև ամենայն Հայոց նոր ընտրելի կաթողիկոսի հաստատութիւնը, եւ երրորդ Նորին Սրբութեան թաղումը նշանակել հետեւեալ կիրակի՝ այս դեկտեմբերի 19-ին:

Նախագահող

Անդամներ

11 Պեկտեմբերի 1910 ամի. Լսեցին զեկուցումն, ըստ
 զօրութեան XI հատ. I. մասի 1148 յօդուածի Վեհափառ
 Կաթողիկոսի և Սինոդի ատենապետի ս. Էջմիածնից բա-
 ցակայութեան կամ հիւանդութեան դէպքում նորա տեղն
 անցնում է Ատենիս արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս ան-
 դամներից՝ աւագագոյնը, հետեաբար Տ. Տ. Մատթէոս Բ.
 Կաթողիկոսի մահուան պատճառով ճանաչել Սինոդի ա-
 տենապետի տեղակալ Ատենիս աւագագոյն անդամին, Ուս-
 տի Հրամայեցին. վերև յիշուած օրէնքի տրամադրու-
 թեան համաձայն, Սինոդի աւագագոյն անդամ Տ. Գէորգ
 Արքեպիսկոպոս Սուրէնեանին ճանաչել Սինոդի Ատենապե-
 տի տեղակալ. այնու, որ այդ պաշտօնի հետ վարէ նաև
 իւր անդամական պարտականութիւնը, իսկ յատկապէս
 Կաթողիկոսի իրաւասութեան վերապահուած գործերը
 թողնել Սինոդում առանց ընթացքի մինչև նորոգ կաթու-
 ղիկոսի ընտրութիւնը և հաստատութիւնը, որի մասին
 յայտնել Ռուսաստանի Հայոց թեմակալ առաջնորդներին,
 Ամենապատիւ պատրիարքներին, Սոյ Ս. Կաթողիկոսին
 և արտասահմանի Հայոց վիճակաւոր առաջնորդներին: Այս
 օրագրի քաղուածքը ներկայացնել Տ. Գէորգ Արքեպիսկո-
 պոսին:

Նախագահող
 Անդամներ



12 դեկտեմբերի 1910 թ. վեհարան. Վեհափառ Կա-
 թողիկոսի մահից յետոյ Սինոդի անդամների ներկայու-
 թեամբ գաւազանակիր Տ. Մեսրոպ վարդապետի ձեռքով
 բացուեցան հանգուցեալ կաթողիկոսի գրասեղանի գզրոց-
 ները, որից երևեցաւ կանխիկ դրամ ութ հարիւր իննսուն
 և չորս ուրբի եօթանասուն չորս կոպէկ, որ յանձնուե-
 ցաւ Սինոդի գանձապահին, ներքին գանձարանի և հան-
 դերձատան բանալիները, որոնք մատուցուեցան Տ. տեղա-
 կալին, Տաճարի թանգարանի, մասանց խորանի և թան-

գարանի պահարանների բանալիները, որ դրուեցին ներքին գանձարան:

Տեղակալ Ատենապետի Սինօզի, Անդամներ

Ստացայ ութհարիւր իննսուն չորս ռուբլի եօթանասուն չորս կոպէկ (894 ռ. 74 կ.). գանձապահ Արտակ վարդապետ:

Բացուեցին վեհ. Հայրապետի ընդունելութեան դահլիճի գրասեղանի գրքոցները, բոլոր թղթերը ըստ տեսակի ինամբով ծրարուած և կապուած էին: Այնտեղ էր և Նորին Սրբութեան ել և մտի մատեանը, ուր ամենայն ճշգրութեամբ արձանագրուած էին մուտք և ելքը, մնացորդ գումարը 894 ռ. 74 կոպէկը գտնուեց քսակի մէջ: Նոյն իսկ տուժարի մէջ արձանագրութիւն կազմուեց և գումարն, ստորագրելով մատեանում, ստացաւ Մայր Աթոռի գանձապահը: Նորին Սրբութեան մօտ գրտնուած Տաճարի թանգարանի և այլ բանալիները արձանագրութեամբ յանձնուեցին Տ. Տեղակալին:

Այնուհետև ընդունելութեան դահլիճում գտնուած և գրքոցներում եղած թղթեր, իրեղէնները, և թեթե իրերը տարուեցին «ժողկեայ դահլիճը»: Նորին Սրբութեան մարմինը դուրս բերուեց ընդունելութեան դահլիճ, կնքուեցին բոլոր դռներն, և Հանգուցեալ Հայրապետի վերայ «Հոգւոց» ասելով Սինօզի անդամները Տ. Տեղակալի առաջնորդութեամբ գնացին և կնքեցին հայրապետական դիւանը:

Ամեն. Տ. Տեղակալի բարեհաճութեամբ վեհ-ի մահուամբ իրան յանձնուած բանալիները դրուեցին ներքին գանձարան:

Հանգուցեալ Հայրապետի թաղումը որոշուեց գեկտ. ամսիս 19-ին և ամեն օր, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ հանգուցելոյ համար հանգստեան պաշտօն է կատարուում:

Տ. Տ. Մատթէոս Բ. Սրբազնագոյն Կաթողիկոսն ամենայն Հայոց ծնունել է 1845 թ. փետրվարի 22-ին Կ. Պօլսոյ Գուլ-Գաբու թաղում. մի արհեստաւորի ընտանիքում: Նորին Սրբութեան մկրտութեան անունն էր Սիմէօն. նրա հայրն էր գերձակ Մարտիրոսը, որ ունէր ինն զաւակ, որոնց եօթներորդն էր ինքը: Ուսել է սկզբում Գուլ-Գաբուի Մայր վարժարանում և ապա Ս. Պօղոսեան վարժարանում: Նորին Սրբութիւնը կոչւում էր Իզմիրլեան, որովհետև նրա պապը Համբարձումը Իզմիրցի է:

Սիմէօնը 1862 թուին աւարտելով ուսման ընթացքը կարգւում է Օրթագիւղի Ս. Թարգմանչաց վարժարանում կրտսեր ուսուցիչ:

1864 Թաքթաքեան Պօղոս պատրիարքի հրամանով Օրթաքեոյի Ս. Աստուածածին եկեղեցում Կապուտիկեան Յովհաննէս եպիսկոպոսից ձեռնադրւում է սարկաւազ 19 տարեկան հասակում: Պօղոս պատրիարքը անձամբ հասու լինելով Սիմէօն սարկաւազի անձնական արժանիքին և կրօնական հմտութեանը, շատ ցանկանում է, որ նա վարդապետ ձեռնադրուի և Սիմէօն սարկաւազը 1869 թուին յունիսի 22-ին պատրիարքական տեղապահ Տ. Արիստակէս եպիսկոպոսի հրամանով ձեռնադրւում է վարդապետ նոյն Յովհաննէս եպիսկոպոս Կապուտիկեանի ձեռքով՝ վերակոչուելով Մատթէոս. նոյն տարին Վարազայ Խաչի բարեկենդանին ստանում է վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութիւն. Խրիմեան Մկրտիչ պատրիարքի մօտ քարտուղար է ընդունւում, վարելով միանգամայն Մայր և Լուսաւորչեան վարժարաններում կրօնուսուցի պաշտօնը: Այս բոլոր ժամանակ հանդուցեալի հովանաւորը լինում է Կ. Պօլսում յայտնի Տ. Սահակ քահանան:

Մատթէոս վարդապետը իբրև պատրիարքի քարտուղար իբրև Կ. Պօլսոյ ազգ. կենդրոնական վարչութեան և երեսփոխանական ժողովի գործօն անդամ՝ մեծ դեր է խաղում: Նա Խրիմեանի պատրիարքութեան վերջին երկու տարին հակադիր խմբի մէջ, որ իւր ժամանակին կոչ

ուում էր Ղալաթիայի Օճաղ, մեծ ազդեցութիւն ունէր և, ազգային գործոց վերաբերութեամբ, Հանգուցեալ Գէորգ Գ. կաթողիկոսի հայեացքների հետևող էր ու Սսի և Աղթար մարի կաթողիկոսական խնդրի մէջ պաշտպանում էր Ս. Էջմիածնի ընդհանրական կաթողիկոսի իրաւունքները:

1870 թուի փետր. 27-ից սկսած Սահակ Ապրօ էֆէնտու վարչութեան օրով հրաւիրուում է կրօնական ժողովի ատենադպիր և 1872-ին մարտի 12-ին քուէների բացարձակ առաւելութեամբ ընտրուում է կրօնական ժողովի անդամ և ատենադպիր: Այս ժամանակ Մատթէոս վարդապետի ջանքով կազմուում և տպագրուում են տեսուչ խորհուրդների հրահանգները: Այս հրահանգներից ազգային վարժարանների բարեկարգութեան հրահանգը երկար ժամանակ կիրառութեան մէջ էր: Այս ժամանակ Ղազարոսեան Քրիստոստուր էֆէնդու հետ գնում է Բուրսա և կարգադրում առաջնորդական խնդիրը: 1872 թ. դեկտեմբ. 29-ին Սսի կաթողիկոսական խնդրի համար կազմած ժողովի գործօն անդամն է դառնում. և 1873 թուի յունվարի 29-ին ի վարձ իւր քարուք ծառայութեան պատրիարքական տեղապահ Նիկողայոս եպիսկոպոսից ծայրագոյն վարդապետութեան գաւազան է ստանում Օրթագիւղի եկեղեցու մէջ և նոյն տարին Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցու քարոզիչ ու ձեւարան-վարժարանի կրօնի ուսուցիչ է կարգուում:

1874 թուին Մատթէոս վարդապետը Բալլըքէսերի վիճակի առաջնորդ է ընտրուում և տեղւոյն ժողովրդի համախօսականի համեմատ կրօնական ժողովը եպիսկոպոս ձեռնադրուելու համար վկայական է տալիս Մատթէոս վարդապետին, սակայն նա հրաժարուում է առաջնորդութիւնից, հրաժարականին կցելով իւր եպիսկոպոսանալու վկայականը:

1875-ին հոգելոյս Տ. Գէորգ Գ. կաթողիկոսը վարդապետական լանջախաչ է շնորհում Մատթէոս վարդապետին, որ 1876 թուին հրաւիրուելով Ս. Էջմիածին,

1876 թ. ապրելի 9-ին մեկնում է Կ. Պոլսից և հասնելով Մայր Աթոռ՝ հոգելոյս Տ. Ներսէս պատրիարքի վկայականով Մայիսի 17-ին, Համբարձման տօնի օրը, ձեռնադրւում է եպիսկոպոս իբրև միաբան Ս. Էջմիածնի։ Այնուհետև Մատթէոս եպիսկոպոսը իբրև կենդրօնի եկեղեցական՝ մասնակցում է պատրիարքարանի բոլոր ժողովներին ու մասնաժողովներին, միշտ էլ իբրև տեղեկաբեր։

Մատթէոս եպիսկոպոս Իզմիրեանը Ռուս-Տաճկական պատերազմից յետոյ 1878 թ. Կ. Պոլսոյ ազգային վարչութեան յանձնարարականով գալիս է Ս. Էջմիածին, խնդրելու, որ հոգելոյս Տ. Գէորգ Դ. կաթողիկոսը միջնորդի Թագաւոր Կայսր Ալէքսանդր Բ.ի առաջ, Բերլինի վեհաժողովում պաշտպանելու հայկական խընդիրը, որ սկսուած էր ուս կառավարութեան նախաձեռնութեամբ Սան-Ստեֆանօյի դաշնագրի 16 յօդուածով։ Երբ հայաբնակ գաւառներում փոխանակ բարենորոգումների հարստահարութիւնները շատացան՝ Ներսէս պատրիարքը պատճառաբանեալ հրաժարական ներկայացրեց Բ. Դրան, Մատթէոս եպիսկոպոսը իբրև փոխանորդ վարում էր պատրիարքարանի ներքին գործերը, իսկ Ներսէս պատրիարքը պէտք է վարէր Բ. Դրան հետ հայկական խնդրի վերաբերեալ բանակցութիւնները, դրան կապելով իւր հրաժարականը։ Նրան աջակցում էր Ազգ. ժողովից ընտրուած խորհրդական մի Յանձնաժողով՝ որի 14 անդամներից առաջինն էր Մատթէոս եպիսկոպոս Իզմիրեանը, Մատթէոս եպիսկոպոսը 1879 թուին կարգւում է պատրիարքական խորհրդական և հինգ ամիս նոյն պաշտօնը շարունակելով՝ հրաժարւում է Ազգ. Երեսփ. ժողովի շնորհակալութեան քուէով։ 1880 թուին ընտրւում է կրօնական խորհրդի անդամ։

1883 թուի յունվարին կաթողիկոսական ժողովի անգամ կարգուելով պատրաստում է մի տեղեկագիր, որ յետոյ տպւում հրատարակւում է իբրև առանձին գիրք՝ «Հայրապետութիւն Հայստտանեայց սուրբ եկեղեցւոյ և Սրս ու Աղթամար» վերնագրով։

1885 թուին ուղեկցում է Եսայի պատրիարքին Կ. Պոլսից Երուսաղէմ և Կ. Պոլսոյ ազգային վարչութիւնից հրաւիրակ ընտրուելով նորընտիր Յարութիւն պատրիարքին առաջնորդում է Կ. պօլիս:

1886 թուին յունվարի 3-ին Եգիպտոսի գաւառական հայ ժողովը միաձայն Մատթէոս Եպիսկոպոսին ընտրում է առաջնորդ, որպիսի պաշտօնը 4 տարի արդիւնաւորապէս վարելուց յետոյ կլիմայի անյարմարութեան պատճառով հրաժարւում է և վերադառնալով Կ. Պօլիս՝ նշանակւում է Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցու քարոզիչ և առանց վարձատրութեան՝ կրօնի դասեր է աւանդում Կենդրոնական Վարժարանի բարձր դասարաններում:

1894 թուի գեկտեմբերի 7-ին Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեանը Ազգ. Երեսփ. ժողովում 76 երեսփոխաններից 67-ի քուէով ընտրւում է Կ. Պոլսոյ պատրիարք, և նոյն գեկտեմբերի 20-ին մեծ հանդիսաւորութեամբ Սկիւտարից հրաւիրւում է Պատրիարքարան:

Պատրիարք Մատթէոս արքեպիսկոպոսի գլխաւոր հոգան եղաւ հայաբնակ գաւառների բարենորոգումը, որի ծրագիրը առաջարկուած էր դեսպանների միջոցով Այդ ծրագիրը ստանալու համար պատրիարքի գիմուսներին՝ Բ. Գուռը պատասխանում էր. «Դեսպաններից կարող էք առնել, իսկ պատրիարքը կրկնում էր, որ ինքը պաշտօնական յարաբերութեան համար միայն Բ. Գուռն է ճանաչում»:

Տեղի ունեցան հայկական կոտորածներ, որոնց որբերին և այրիներին հարկ էր օգնել և պատսպարել: Մատթէոս պատրիարքը ընդունեց և բաշխեց Պօրտ ընկերութեան գանձապահ մր. Բեթի միջոցով 20,000 ոսկի:

Հայկական կոտորածների պատճառով Եւրոպայի վերդախուած միտքը հանդարտեցնելու համար Բ. Գուռը թերադրում է, որ Մատթէոս պատրիարքը գոհունակութեան թուղթ տայ, պատրիարքը հրաժարւում է ստորագրել այդպիսի թուղթ. Սուլթան Համիդը կողմնակի ցանկու-

Թիւն է յայտնում, որ պատրիարքը հրաժարական տայ, Մատթէոս պատրիարքը չի համակերպւում, բայց հուսկ ուրեմն, տեսնելով որ անհնարին է Համիդի դէմ մաքառել, ինկատի ունելով ժողովրդի շահը, որ իւր պատճառով վտանգում է կառավարութեան՝ դէպի ինքն անբարեացակամութեամբ 1896 թուի յուլիսի 23-ին հրաժարւում է և արքայութեանը Երուսաղէմ, ուր 12 տարի արքայականի մտայոյզ կեանքն է վարում:

1908 թուի յուլիս ամսի 11-ին Տաճկաստանում հրատարակուեց Սահմանադրութիւն: Քաղաքական նկատումներով արքայութեանը ներման հետեւանքով Երուսաղէմի արքայական նախկին պատրիարք Մատթէոս արքեպիսկոպոսն էլ ազատուեց արքայականի դառն վիճակից և վերադարձաւ Կ. պօլիս: Ընդունելութիւնը շատ փառաւոր էր. ահագին բազմութիւն ընդառաջել էր շոգենաւով և նաւակներով:

1908 թ. հոկտեմբերի 22-ին Ազգային Ժողովը միաձայն վերընտրում է նախկին պատրիարք Մատթէոս արքեպիսկոպոսին պատրիարք. սակայն նրան վիճակուած չէր այս անգամ երկար վարել պատրիարքական պաշտօնը, որովհետև Ս. Էջմիածնի Կաթողիկոսական Ընտրութեան Համազգային Ժողովը 1908 թուի նոյեմբերի 1-ին 77 հոգեւորական ու աշխարհական պատգամաւորներէից 73 ձայնով ընդդէմ 4-ին Մատթէոս արքեպիսկոպոսն ընտրուեց ամենայն Հայոց կաթողիկոսութեան առաջին թեկնածու:

1909 թուի ապրիլի 15-ին Նորին Կայսերական Մեծութեան հրովարտակով Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանը հաստատուում է Կաթողիկոս ամենայն Հայոց: Նոյն ապրիլի 28-ին Ս. Էջմիածնում ցտացուելով վեհ. Կաթողիկոսի հաստատութեան մասին պաշտօնական թուղթը, հետեւեալ օրը կաթողիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը հանդիսաւոր ս. պատարագ մատոյց և պատարագին առաջին անգամ յիշեց Տ. Մատթէոս Բ. կաթողիկոսի անունը. ս. պատարագից յետոյ կատարուեց

Թագաւոր Կայսեր և Օգոստափառ ընտանիքի արևշատու-
թեան համար գոհացողական մաղթանք:

Ս. Սինօդը օրագիր կազմելով շրջաբերական ուղարկեց
հայաբնակ վայրերն հաղորդելով Վեհ. Հայրապետի հա-
տատութիւնը և յանձնարարեց ժամերգութեան ժամանակ
պատշաճ տեղերում յիշատակել Վեհ. Հայրապետի անունը,
իսկ ապրիլի 30-ին Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը
Վեհափառ Հայրապետին Մայր Աթոռս առաջնորդելու
համար հրաւիրակ կարգեց Թիֆլիզի առաջնորդ Տ. Գարե-
գին արքեպիսկոպոսին, Ղարաբաղի առաջնորդ Տ. Աշոտ
եպիսկոպոսին և Սինօդի անդամներ Տ. Մեսրոպ Տէր Մով-
սէսեան ու Տ. Բաբգէն Աղաւելեան վարդապետներին, որոնք
մայիսի 5-ին ներկայանալով Կովկասի Փոխարքային, 7-ին
Բաթումի վերայով մեկնեցին Կ. Պօլիս, ուր և ժամանեցին
նոյն մայիսի 13-ին և ներկայացան Վեհ. Հայրապետին:
Իջևան պատրաստուած էր թէ Վեհ. Հայրապետի և թէ
հրաւիրակների համար Բերայի Ս. Երրորդութեան եկեղե-
ցու ժող Սպանդիդ հիւրանոցը:

Մայիսի 18-ին, Ս. Երրորդութեան եկեղեցում հան-
դիսաւոր ս. պատարագ մատոյց Տ. Գարեգին արքեպիս-
կոպոսը ժողովրդի հոժ բազմութիւն լցրել էր եկեղեցին.
Վեհափառ Հայրապետը բազմել էր իւր համար յատուկ
պատրաստուած հովանաւոր գահաւորակի վերայ: Հայրա-
պետի անունն յիշատակութեան ժամանակ երգուեց ձեջ-
միածինն ի Հօրէ՛ շարականը. Գարեգին արքեպիսկոպոսը
մի համառօտ ճառով ներկայացնում է Վեհափառ Կա-
թողիկոսին հայրապետական գաւազանը, իսկ Աշոտ ե-
պիսկոպոսը՝ խաչը Վեհ. Հայրապետը ի պատասխանի՝ ընդ-
գծելով եկեղեցու վիճակը և իւր ստանձնած պաշտօնի
ժանրութիւնը՝ յայտնեց՝ որ ինքն համօրէն ազգի աջակ-
ցութեամբ ի բարին պէտք է գործի և պէտք է ջանայ
վարչական գործերի մէջ արդարութիւնը գործադրել: Տե-
սարանը շատ սրտագրաւ էր, և եկեղեցական այսպիսի մե-
ծաշուք հանգիսի կարօտ ժողովրդից շատերը սքանչացման

և հոգեգմայլութեան մէջ, յուզուած՝ ուրախութեամբ և բերկրութեամբ արտասուում են:

Վեհափառ Հայրապետը մայիսի 21-ին Ս. Երրորդութեան եկեղեցում հրաժեշտի ու պատարագ է մատուցանում, և նոյն օրը հրաւիրակների, և տեղացի մի քանի բարձրաստիճան հոգևորականների ու աշխարհականների հետ ներկայանում է Օգոստ. Սուլթան—Մուհամմէտ V-ին Գոլմա-Բաղչէի պալատում, և այցելում է մեծ-վէզիր Հէլմի փաշային:

Մայիսի 22-ին վերջին անգամ մասնակցում է Աղգ. Երեսփոխանական Ժողովին, որպէս բաղձամեայ անդամ՝ նոյն ժողովի: Ժողովի վերջին բոլոր երեսփոխանները կարգով համբուրում են Վեհ. Հայրապետի աջը շնորհակալութիւն յայտնելով Նորին Սրբութեան բաղձամեայ անբասիր պաշտօնավարութեան համար: Ամենքի դէմքերի վերայ էլ տիրել էր տրտմութիւն և թախիժ:

Մայիսի 23-ին Վեհ. Կաթուղիկոսը հայրապետական հանդերձանքով ճանապարհ ընկաւ խուռն յուզարկաւորների ուղեկցութեամբ, և ծովափին սպասող ոուսաց դեսպանի շոգենաւակով բարձրացաւ Չիխաչև շոգենաւը:

Թագաւոր կայսեր բարեհաճ ցանկութեամբ Վեհ. Հայրապետը նախքան Ս. Էջմիածին գալը պէտք է Պետերբուրգում ներկայանար Նորին Կայսերական Մեծութեան, և ըստ այնմ՝ ևս, մայիսի 24-ին կէս օրից յետոյ հասաւ Օդեսսա. հետևեալ օրը Թագուհի կայսրուհի Աղէքսանդրա Յէօդորովնայի ծննդեան տօնի առիթով Օդեսսայի հայ եկեղեցում գոհացողական մաղթանք կատարելուց յետոյ շարունակեց իւր ճանապարհորդութիւնը դէպի Ս. Պետերբուրգ:

Մայիսի 27-ին Նորին Սրբութիւնը ժամանեց Ս. Պետերբուրգ. Մայիսի 28-ին այցելեց նախարարական խորհրդի նախագահ և Ներքին Գործերի նախարար Պ. Ա. Ստոլիպինին:

Մայիսի 29-ին կէսօրից յետոյ ժամը 2 1/2-ին Պետերհոֆի—Մեծ Պալատում Վեհ. Հայրապետը ներկայացաւ

Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրին:

Վեհափառ Հայրապետը ներկայացաւ նաև Մայր Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնային:

Ս. Պետերբուրգից դուրս գալով Վեհափառ Հայրապետը կանգ առաւ Մոսկվա և Նոր-Նախիջևան քաղաքներում. յունիսի 11-ին դուրս գալով Նոր Նախիջևանից անընդհատ շարունակեց ճանապարհը մինչև Թիֆլիս: Ճանապարհին ամեն տեղ Նորին Սրբութեանը դիմաւորում էր ազգաբնակչութիւնը ամենայն յարգանքով:

Վեհ. Հայրապետը Թիֆլիս հասաւ յունիսի 14-ին, նոյն օրը այցելեց Կովկասեան Փոխարքայ Գրաֆ Վորոնցով-Դաշկովին և ընդունեց Նորին Պայծառափայլութեան փոխադարձ այցելութիւնը: Նորին Սրբութիւնը մնաց Թիֆլիսում մինչև յունիսի 23-ը, և այդ ժամանակամիջոցում բացի այցելութիւններից և ընդունելութիւններից, հանդիսագիրն եղաւ Ներսիսեան Հոգևոր դպրոցի նոր շինութեան հիմնարկութեան հանդիսին:

Վեհ. Հայրապետը յունիսի 23-ին դուրս գալով Թիֆլիսից՝ մի օր մնաց Սանահնի վանքում, 24-ին հասաւ Ալէքսանդրապօլ, 25-ին այցելեց Անի և Ղօշավանք. յունիսի 28-ին առաւօտեան ժամը 8-ին դուրս գալով Ալէքսանդրապօլից, կէսօրուայ ժամը 1-ին հասաւ Էջմիածին կայարանը, ուր ընդառաջել էին Նորին Սրբութեանը Տեղակալ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսը, Սինօդի անդամները և այլ բազմաթիւ անձինք Վաղարշապատից և այլ տեղերից. ժամը 3-ին Վեհափառ Հայրապետը հասաւ Մայր Աթոռ Հանդիսական գնացքին ու ովսանաներին հետևեց պաշտօնավարութեան ծանր խաչակրութիւնը: Վեհ. Հայրապետը Ս. Էջմիածնում սկսեց պատրաստուել իւր բազմադրացի և ծանր պաշտօնի համար՝ ուսումնասիրելով գործերը:

Նորին Վեհափառութիւնը հայրապետական Ս. օծումն ընդունեց 1909 թուի Սեպտեմբերի 13-ին Խաչվերացի կիւրակէ օրը, և մինչև օծումն Նորին Սրբութեան հոգածութեան առարկաներն էին Մայր Աթոռի անտեսութեան

բարևոքումն, դպրոցների կանոնաւորութիւնը և թեմական գործերի բարեկարգ կառավարութիւնը:

Մայր Աթոռի անտեսութիւնը բարևոքելու համար հարկաւոր էր ծանօթ լինել Մայր Աթոռի վիճակի հետ. ուստի և Վեհ. Հայրապետը յանձնարարեց Սինոդի անդամներին բոլոր հաստատութիւնների տեղեկագիրը կազմել և ներկայացնել իրան, որ և կատարուեց. Մայր Աթոռի պաշտօնեաների ընտրութեան համար սահմանուեց միաբանական ժողով և այդ ժողովներով ընտրուեցին Հայրապետական Դիւանի Խորհուրդ չորս անդամից բաղկացած. (կոնդ. ի 24 սեպտեմբերի. նոյն ամսի Արար. եր. 779): Վանական Կառավարութեան անդամներ, Տպարանի տեսուչ, Արարատի խմբագիր, (Արարատ. Հոկտեմբեր—Նոյեմբ. եր. 815—17), վանական կանոնադրութիւն մշակելու համար կազմուեց հինգ անձերից բաղկացած մի Յանձնաժողով. դպրոցների կանոնաւորութեան համար (պօլիօթենիայի 1178 յօդուածի, 1874 թ. Բարձրագոյն հաստատուած օրէնքի և Կովկասեան Փոխարքայի հրատարակած ժամանակաւոր կանոնների հիման վերայ) կազմուեց «Ժամանակաւոր հրահանգ» և հրատարակուեց Տեղապահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի ստորագրութեամբ. կարգուեց ուսումնարանական յանձնաժողով դպրոցների ծրագիր մշակելու և դպրոցական գործերը ղեկավարելու համար (Արար. 1909. սեպ. եր. 718—21): Այս ամառ հրատարակուեց ծխ. դպրոցների ծրագիր իբրև միամեայ փորձ անթերի գործադրելու, պարտաւորելով դպրոցական վարչութիւններին միամեայ փորձից յետոյ իրանց նկատողութիւնները յայտնել. Նորին Սրբութեան ուշադրութիւնից չվրիպեց մեր հոգևոր թեմական ու ծխական և պետական միջնակարգ ու տարրական դպրոցների կրօնի դասաւանդութեան խնդիրը (Արարատ Հոկտ.—Նոյեմբ. 1909 թ. եր. 881):

Հոգև. վարչական հաստատութիւնների դործառնութեան մէջ կանոնաւորութիւն պահպանելու համար Նորին

Սրբութիւնը կոնդակով (Արարատ 1909 թ. Հոկտ. — Նոյեմբ. եր. 778—779.) սահմանեց, որ խնդիրները մերձաւոր իշխանութիւնների միջոցով աստիճանաբար հասնեն բարձր իշխանութեան:

1905 թ. օգոստ. ժամանակաւոր կանոնների հիման վերայ տրուեց «Ժամանակաւոր հրահանգ (նոյն Արար. եր. 793) թեմական խորհուրդների համար:

Տաճարի վերանորոգութեան ու նոր վեհարանի շինութեան խնդիրները հերթական դարձան:

Կազմուեց և հրատարակուեց Մայր Աթոռի և Ռուսաստանի հայ բոլոր թեմերի մուտքի և ելքի նախահաշիւ, որ իւր բոլոր թերութիւններով հանդերձ առաջին փորձն է՝ ապագայում՝ առաւել լրիւ և կանոնաւոր տարեկան ելեմտացոյցի:

Նորին Սրբութիւնը ամենայն ուշադրութեամբ հետեւում էր Սինօզի և Հայրապետական Դիւանի բոլոր գործառնութիւններին: Երբէք Ս. Էջմիածնի և Կ. Պօլսոյ պատրիարքարանի միջև այնպիսի սերտ յարաբերութիւն չէ եղել, ինչպէս սկսուել և շարունակուում էր Մատթէոս Բ. կաթողիկոսի օրով: Մի և կէս տարուայ ընթացքում վեհափառ Տէր Մատթէոս կաթողիկոսը Ս. Էջմիածնում ճանաչուեց իբրև մի մարդ՝ վերին աստիճանի օրինապահ և կարգապահ, զգուշաւոր, ճիշտ, զգայուն հասարակաց ձայնին, որ արտայայտուում էր պարբերակական մամուլում, մաքուր՝ դրամական հաշիւներում, երկիւղած դէպի եկեղեցական կարգերն ու կանոնները: Նա որքան ճիշդ և խիստ էր դէպի ինքն և իւր համակրողները՝ այնքան զիջող և ներող դէպի իւր հակառակորդները: Նորին Սրբութեան գրած վերջին նամակը բժ. Թորգոմեանին դարձեալ նուիրուած է ազգային գործերին, որ ապացուցանում է, թէ նրա հանապազօրեայ հոգսն էր ազգային գործը: Նա դեռ իւր առաջին հիւանդութեան սաստիկ տազնապի մէջ առ վայր մի մոռանում է իւր դառն ցաւը, դառնալով Տ. Գէորգ

արքեպիսկոպոսին՝ ասում. «Գէորգ Սրբազան, լաւ նայէ Մայր Աթոռը» և իւր գզրոցի բանալին մի կարևոր թղթի հետ յանձնում Տ. Մեսրոպ եպիսկոպոսին:

Նորին Սրբութիւնը իւր բոլոր գործերի մէջ, լինեն նրանք հասարակական թէ անձնական, այնպէս ճշդապահ, մաքուր և արդիւնաւոր էր, որ իւր գործերի հաշուետու-թեան ժամանակ իրաւունք ունի երկնաւոր ողորմած դատաւորից լսելու. «Ազնիւ ծառայ, բարի և հաւատա-րիմ... մուտ յուրախութիւն տեառն քո» (Մատթ ԻԵ, 21):

Այն ժամանակ, երբ Տ. Մատթէոս Կաթուղիկոսը մի տարուայ փորձառութեամբ ճանաչելով մարդկանց, հմտա-նալով մեր երկրի սովորութիւններին և պաշտօնական հաս-տատութիւնների գործավարութեան եղանակին սկսել էր գործել, դժբաղդաբար վրայ հասաւ ծանր հիւանդութիւնը:

1910 թուի նոյեմբերի 29-ի առաւօտեանը Վեհ. Հայ-րապետը ընդունելութեան դահլիճ դուրս գալով սկսում է գրել Կ. Պօլիս բժ. Վահրամ Թորգոմեանին հետեւեալ նամակը.

«Ձեր ազնուութեան նոյեմ. ¹¹/₂₄ թուակիրը կարդացի և ազգային գործերու ստացած ուղղու-թեան մինչև աստիճան մը վերահասու եղայ: Ծանօթ հրաժարականներու, ինչպէս և այլ ազգ-խնդրոց մասին լիուլի տեղեկութիւն շունինք, վասն զի Պօլսոյ թերթերը միշտ ուշ և գրեթէ շարունակ թիւերը պակսած կը հասնին մեզ:

«Կ. Պօլսոյ մէջ լրագրութիւնը գոյութիւն ու-նեցած օրէն սովորական եղած է պաշտօնաւոր եկեղեցականներն և աշխարհիկ անձերը քննա-դատել իրաւացի կամ անիրաւաբար: Ասի իրա-կանութիւն մ'է, որ ամեն հայ մարդու քաջածա-

նօթ է, ուստի և սովորական դարձած գործելու եղանակ մ'է, որու նկատմամբ վշտանայն անօգուտ է, բաւական է, որ գործողք, ըլլան եկեղեցական կամ աշխարհական, մտքուր ու պայծառ խղճի առթած անդորրութիւնը վայելին: Արդար, բարեխիղճ և փաստալից քննադատութիւնը միայն կը յաջողի զեղծումները բառնալ և ազգային գործոց վիճակին բարւոք ուղղութիւն մը տալ, և ոչ թէ կուսակցական անօրակելի պայքարներն, որոնք իսկապէս փնասակար են ազգին, և կուտաջնորդեն սանձարձակութեան, որ և կառաջնորդէ ազգային վարչական հեղինակութեան ոչնչացման և կրօնական զգայմանց»...

Վերջին բառը գրելիս ժամը յօտ 8¹/₂-ին Նորին Սրբութիւնը յանկարծ ցաւեր է զգում՝ կրճքում, որից սկսում է սաստիկ նեղուել, և ընդհատում է նամակը: Անմիջապէս կոչուեց Մայր Աթոռի բժիշկ պ. Կ. Տէր Խաչատրեանը, որը ցաւերը համարեց նեարդային, և քննելով գտաւ, որ սիրտը թոյլ է գործում: Հրաւիրուեցին Սինօզի նախանդամ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը և Սինօզի անդամ Տ. Մեսրոպ եպիսկոպոսը: Հրաւիրուեցին Երևանից բժիշկներ՝ պ. պ. Ա. Տէր Աւետիքեան, Յ. Տէր Միքայէլեան և Ա. Տէր Գրիգորեան, որոնք Մայր Աթոռի բժշկի հետ միասին խորհուրդ անելով, այն եզրակացութեան եկան՝ որ Նորին Սրբութեան հիւանդութիւնը ստենոկարտիա է, պատշաճ դարմանը յատուցուեց և Նորին Սրբութիւնը կէսօրից յետոյ ժամը 3-ին հանգստանալով՝ քնեց: Այնուհետև Վեհի առողջական վիճակը բաւարար էր, և իրան լաւ էր զգում: Յաջորդ օրն ևս վիճակը լաւ էր, իսկ դեկտեմբերի 1-ին երե-

կոյեան ժամը 9-ին կրկնուեց կրճքի ցաւը, որ առաջինից թոյլ էր և տևեց կէս ժամ, դեկտեմբերի 2-ի առաւօտեան ժամը 4-ին նորից կրկնուեց ցաւն առաջիններից աւելի թոյլ և տևեց մօտ երկու ժամ: Ամսոյս 1-ին հրաւիրուած բժիշկներ՝ պ. պ. Ա. Տէր Աւետիքեան և Յ. Յովհաննիսեան վերատին բժշկական խորհուրդ արին պ. Տէր Խաչատրեանի հետ և գտան Վեհի վիճակը բաւարար. հարկաւոր դեղերը նշանակելով և խնամատարութեան վերաբերեալ խորհուրդները տալով՝ վերադարձան Երևան: Ամսոյս 4-ի առաւօտեան յիշեալ երկու բժիշկները դարձեալ այցելեցին նորին Սրբութեան առողջական վիճակն իմանալու, և գտան լաւ:

Հիւանդութեան ընթացքում Մայր Աթոռի բժիշկը և միաբաններից ոմանք հերթով շարունակ գիշերում էին Վեհարանում: Վեհի հիւանդութեան ընթացքում ստացուեցին հեռագրեր զանազան բարձրաստիճան պաշտօնեաներից, հոգևոր անձինքներից և քաղաքների հայ համայնքների կողմից, որոնք առողջութիւն էին ցանկանում հոգևոր ճիրով և ինդրում էին տեղեկութիւն առողջական վիճակի մասին:

Կովկասեան Փոխարքան նոյեմբերի 30-ին հեռագրում է Սինօդի անդամ Տ. Մեսրոպ Եպիսկոպոսին Վնորին Սրբութեան առողջութեան մասին անհանդիստ եմ, հազարեցեք՝ ինչպէս է զգում իրան Կաթուղիկոսը: Իսկ նորին պայծառափայլութեան ամուսին, Կոմսուհի Ե. Վորոնցովա Դաշկովան՝ հեռագրում է դեկտեմբերի 1-ին: Տեղի սղութեան պատճառով թողնում ենք միւս հեռագրերը, մանաւանդ, որ նորին Սրբութեան բարեհաճ պատուէրով Դիւանը կարևոր տեղեկութիւնները հաղորդել է հեռագիրներով թէ վերոյիշեալ անձանց և թէ խմբագրութիւններին:

Վերջին 3-4 օրերը նորին Վեհափառութեան հիւանդութիւնը անցած էր համարում և առողջական վիճակը գոհացուցիչ, ընդունում էր զեկուցումներ, ստորագրում էր

Թղթեր և անուժ կարևոր կարգադրութիւններ:

Մահուան նախընթաց օրը, դեկտեմբերի 10-ին Վեհափառ Հայրապետը դուրս է գալիս արտաքին դահլիճ, այնտեղ թերթում է լրագրներն ու ստացուած թղթերը, կարդում և ստորագրում է մի քանի պաշտօնական թըղթեր: Բաւական լաւ տրամադրութեամբ զրոյցներ է անում ներկայ եղողների հետ, երեկոյեան պահին անցնում է ընդունելութեան սովորական դահլիճը, մինչև ժամը 8-ը խօսակցում է Մայր Աթոռիս բժշկի հետ, ժամը 9-ին առանձնանում է իւր ննջարանը և իրան շատ լաւ զգալով թոյլ է տալիս իւր մերձաւորներին ու ծառաներին գնալ հանգստանալ և ինքն ընկողմանում է քնելու: Սենեկապանը գիշերը մի քանի անգամ մօտենում է ննջարանի դռանը և տեսնում է Վեհ-ին հանգիստ քնած. ժամը 4-ին դարձեալ նոյն դրութեան մէջ է գտնում: Ժամը 6—7, այն պահին՝ երբ Նորին Սրբութիւնը սովորաբար զարթնում էր, սենեկապահը տեսնելով, որ Նորին Սրբութիւնը զարթնելու նշան չէ անում, կամենում է մտնել ննջարան, բայց չէ մտնում, չկամենալով խանգարել Նորին Սրբութեան հանգիստը:

8^{1/2} ժամին Վեհ. Հայրապետի յապաղումն կասկած է յարուցանում. սենեկապանն ու շաթիլը մտնում են ննջարան և գտնում են Վեհափառ Հայրապետին արդէն հոգին աւանդած:

Վեհափառ Հայրապետի մահուան առիթով Կաթողիկոսական Ամենապատիւ Տեղակալ Տ. Գեորգ Արքեպիսկոպոսին եւ Սինոդին դեկտեմ. 11-ից ուղղած ցաւակցական հեռագիրները.

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքայից

Կաթողիկոսի Տեղակալին

«Մեծ վշտով իմացայ Նորին Սրբութեան Մեծայարգ Կաթողիկոսի վախճանը.

Գրաֆ Վորոնցով—Դաշկով.

Կաթողիկոսի Տեղակալին

Ի բոլոր սրտէ հաղորդ եմ՝ ձեր մեծ վշտին. բառ չեմ գտնում՝ արտայայտելու թէ ինչպէս ցաւալի եւ աւաղելի է.

Կոմսուհի Վորոնցովա—Դաշկովա:

14 Գեհտեմբ.

Պ ա ս ա ս խ ա ն

Նորին Մեծութեան Կովկասեան Փոխարքային.

Վեր առաքելով զէպի Ամենաբարձրեալը ջերմ աղօթքներ Ձեր Պայծառափայլութեան եւ Կոմսուհի Ելիսաւետա Անդրէեվնայի թանկագին առողջութեան համար՝ մատուցանում եմ Ձեր Պայծառափայլութեան ջերմ երախտագիտութիւն Սենատոր Վատացիի եւ Գեներալ Լազարևի՝ Ձեր Պայծառափայլութեան եւ Ձեր ամուսնու անունից արտայայտած ցաւակցական զգացմունքի համար հանգուցեալ Պատրիարք Կաթողիկոս Մատթէոս Բ.-ի յիշատակին, խորապէս՝ զգացուած ենք ես եւ բոլոր միաբանութիւնը.

Տեղակալ Գեորգ Արքեպիսկոպոս.

Թիֆլիսից

Կաթողիկոսի Տեղակալին

Այս ժամիս վերադարձայ Թիֆլիսի Ս. Նունէի աղջկանց ուսումնարանից, ուր վարչութեան եւ հայ աշակեր-

տուհիների ցանկութեամբ կատարուեց հոգեհանգիստ էջմիածնի Մայր Աթոռում՝ վախճանուած ամենայն Հայոց պատրիարք Կաթուղիկոս Մատթէոս Բ.-ի համար: Բոլոր ներկայ եղողներն ու աշակերտուհիները վերառաքելին իրանց ջերմ՝ աղօթքները առ Ամենաբարձրեայն մեծ ձերուհու հոգու հանգստեան համար, ի հեռուստ ցողում են արտասուքով սուրբ գերեզմանը սիրեցեալ Քահանայապետի խորին և անկեղծ զգացմամբ խորապէս համակուածները:

Ս. Նունէի կանանց բարեգործական ընկերութեան Նախագահուհի ստատ-դամա Կոմսուհի Վորոնցովա—Քաշկովա:

Պ ա տ ա ս խ ա ն

Կոմսուհի Ե. Վորոնցովա, Քաշկովային.

Խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Պայծառափայլութիւնից էջմիածնի միաբանութեան և իմ կողմից ընդունել հոգեկան երախտագիտութիւն ցաւակցութեան զգացմանց արտայայտութեան և աղօթքների համար: Օրհնում եմ ուսուցիչներին և աշակերտուհիներին Ձեր բարձր խնամքին յանձնուած ս. Նունէի դպրոցի: Թող Աստուած ընդունէ նրանց արգար աղօթքը և պահպանէ նրանց ս. Հոգու հովանու ներքոյ:

Տեղակալ Քէորզ Արքեպիսկոպոս.

Կաթուղիկոսի Տեղակալին

Բարեհաճեցէք ընդունել իմ ցաւակցութեան արտայայտութիւնը նորին Սրբութեան Կաթուղիկոսի վախճանի առիթով: Խորին վիշտ եմ զգում, որ Տէրը վիճակել էր նրան այնպէս կարճ ժամանակով զարգարել էջմիածնի Պատրիարքական աթոռը: Ամեն բանում թող օրհնուած լինի Աստուծոյ կամքը. երկիւղածութեամբ խոնարհենք նրա առաջ. Յայտնեցէք թաղման օրը:

Վրատանի էկզարխ և Կարթալինայի արքեպիսկոպոս իննովկենաթոս. Ս. Պետրբուրգ Ալեքսանդրեան Լաւրա:

Պ ա Տ ա ս խ ա ն

Պետեւորդ. Ալեքսանդրեան Լաւրա՝ Նորին Բարձր Սրբազնութեան Վրաստանի Էկզարխ Իննովիենտիոս Արքեպիսկոպոսին:

Հաճեցէք ընդունել Էջմիածնի միաբանութեան և իմ շնորհակալութիւնը հայ եկեղեցու Պետ Նորին Սրբութիւն Մատթէոս Բ-ի մահուան առիթով ձեր ցաւակցութեան և հեռագրով յայտնած զգայմանց համար: Թաղումը 19-ին է:
Տեղակալ Կաթողիկոսի Գէորգ արքեպիսկոպոս:

Կ. Պօլսոյ պատրիարք Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսից

«Ամբողջ ազգը սուգի մէջ է ահագին դժբաղդութեան պատճառով: Հայցում ենք աստուածային խնամքը. մատուցանում ենք խորին ցաւակցութիւն — խնդրում ենք հաղորդել մահուան հանգամանքների մանրամասնութիւնները. հասարակաց կարծիքն է կարօտում այդ մանրամասնութիւններին:

Թիւրքահայոց կողմից կարգեցինք Մեսրոպ եպիսկոպոս Տէր Մովսիսեանին, Ժամհարեանին, Համբարձում Առաքելեանին (Մշակի խնամրագիր) ազգի ներկայացուցիչներ թաղման ժամանակ:

Դուրեան Պատրիարք.

Կ. Պօլսոյ Ազգային Ժողովը

Տեղակալ Սրբազան Գեորգ Սուրենեանին

Հայոց ազգային ժողովը խորապէս յուզուած այն դառն կորստեան վերայ, որ ազգը ունեցաւ յանձին Նորին Սրբութեան եկեղեցու գերագոյն Պետի՝ Մատթէոս Բ-ի, խնդրում է Ձեր ամենապատուութիւնից ընդունել իւր անկեղծ վշտակցութիւնները և թարգման կանգնել Ս. Սինոդի մօտ յայտնելով նրան ժողովի և համօրէն ազգի խոր վիշտը:

Նախագահ Ազգ. Ժողովի Ազարեան

Նախկին պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոսից
վշտակցութիւն: Սինօզին և միաբանութեան Մայր
Աթոռի այրիացման համար:

Վրաստանի թեմի Պրաւոսլաւ հոգևորականութեան ժողովը.
Վրաց թեմի հոգևորականութեան համագումարը հա-
ղորդ գտնուելով Հայոց եկեղեցուն հասած վշտին, նրա
պետի և Կաթողիկոսի մահուամբ, իւր նիստը բանալիս
պարտք համարեց յարգել Նորին Սրբութեան յիշատակը
ոտքի կանգնելով:

Նախագահ Բուխիլաձէ քահանայի անունով
Խնդրեմ յայտնել թեմական ժողովին իմ և Էջմիած-
նի միաբանութեան շնորհակալութիւնը համակրական և
ցաւակցական արտայայտութեան համար:

Սուրբ լինի Տիրոջ կամբը, նրա առաջ խոնարհենք
լաւագոյն օրերի համար հաւատ և յոյս ունենալով:

Տեղակալ Քէնրգ Արքեպիսկոպոս.

Կաթողիկոսի Տեղակալին Երևանի Նահանգապետի կողմից.
Նորին Սրբութեան—Պատրիարք Կաթողիկոսի վախ-
ճանի գուժով զգացուած եմ: Խորին վշտով վշտակից եմ
հայ հանուր հօտի սգին:

Նահանգապետ Գրաֆ Տիգէնհաուզէն:

Կաթողիկոսի Տեղակալին

Այսօր վանքի աւագ եկեղեցում հանդիսաւոր ս. պա-
տարագից յետոյ կատարուեց հոգեհանգիստ Թիֆլիսի ամ-
բողջ հոգևորականութեան մասնակցութեամբ, ի Տէր հան-
գուցեալ Կաթողիկոսի համար: Ճառեր ասացինք ես, Քա-
լանթարը և մուֆթին:

Ներկայ էին Փոխարքան իւր ամուսնու հետ, Փոխար-
քայի խորհրդի անդամները, բոլոր նշանաւոր հաստատու-
թիւնների—կաթողիկական, լուտերական, մահմեդական և
հրէական դաւանութիւնների ներկայացուցիչները, պարս-

կական հիւպատոսը և ըն. եկեղեցին և բակը հոժ էր բազմա-
թիւ ժողովուրդով: Կարգապահութիւնը օրինակելի էր:
Եփրեմ Եպիսկ.

Սպահանից.

Այսօր Ամենափրկչեան վանքում կառավարչական հաս-
տատութիւնների և օտար պետութեանց ներկայացուցիչնե-
ները, նաև հայ հասարակութիւնն ու հոգևորականութիւնը
ներկայ դանուելով ս. պատարագին և հոգեհանգստեան
յայտնում են իրանց խորին կսկիծը Վեհափառ Մատթէոս
Կաթուղիկոսի մահուան առթիւ:

Սահակ Արքեպիսկ. և Հանդիսականք:

Թեֆլիս, դեկտեմբ. 16, պատառխան.

Աղէքսանդր Մանթաշեանին.

Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթուղիկոսի մահուան
առթիւ Ձեր արտայայտած ցաւակցութեան համար խնդր-
ում եմ, մեծայարգ Աղէքսանդր Իվանովիչ, ընդունել իմ
և միաբանութեան խորին շնորհակալութիւնը. թող գթած
Տէրը կրած կորստի փոխարէն վարձատրի հայ եկեղեցին
և ժողովուրդը անսասան պահելով սուրբ աթոռը և եկե-
ղեցին, որոնց բարեզարդութիւնը Ձեր գլխաւոր հոգածու-
թիւններից մէկն է:

Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոս.

Մոսկուայի Լազարեան ճեմարանի վերատեսուչ Միլերից.

Ընդունեցէք արևելեան լեզուների Լազարեան ճեմա-
րանի անկեղծ ցաւակցութիւնը ճեմարանի առաջին պատ-
ուաւոր անդամ արժանաւոր պատրիարք Կաթուղիկոս Մա-
թէոս II-ի մահուան առիթով:

16-ն Գեկատեմբերի, Տեղակալին

Իմ ամբողջ Ասորի Ժողովրդի հետ ցաւակցում և ողբում եմ Նորին Սրբազնութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահը: Նորին Սրբութեան ինձ ցոյց տուած ընդունելութիւնը և նրա ինձ վրայ թողած տպաւորութիւնը չի անհետանայ մինչև մահս: Այս րոպէիս հոգեհանգիստ կատարուեց ամբողջ ծխական համայնքի մասնակցութեամբ հանգուցեալ Կաթողիկոսի համար: Աստուած հանդիստարժայութիւն պարգևէ Նորան:

Եփրեմ Եպիսկոպոս Ամենայն Ասորոց:

Անկարող լինելով հրատարակել բոլոր ցաւակցական հեռագիրները, դնում եմ միայն հեռագրողների անունները, որքան հնարաւոր եղաւ մեզ հաւաքել: Ահա այն.

Երեանի փոխ-թեմակալը:

Թիֆլիզի հայ կոնսիստորիայի նախագահողը:

Բեսարաբիայի առաջնորդը:

Շամախուոյ առաջնորդը իւր և թեմի հայ հոգևորականների ու աշխատհանձնների կողմից:

Նոր Նախիջևանի վոյսանորդ Մուշէ վարդապետը իւր և փճակի կողմից:

Խուսական կայսրութեան հայ կաթողիկոսների առաքելական կառավարիչ Սարգիս վարդապետը իւր և իւր հօտի կողմից:

Հին—Խրիմի ս. Խաչ վանքի վանահայր Իսահակ վարդ.-ը

Մայր Աթոռի միաբաններ—Վահան և Մուշէ վարդապետները և Չեօբէքչեան սարկաւազը:

Վահան վարդապետը Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքի վարչութեան կողմից:

Կ. Պոլսոյ նախկին պատրիարք Մաղաքիա Արքեպիսկոպոս:

Եւրոպայի Առաջնորդ Ֆէրդ կպս.-ը իւր և իւր հօտի կողմից:

Յովսէփ արքեպիսկ. Առաջեանք՝ Ֆրեզնոյի (Կալիֆօրնիա, Ամերիկա) հայերի կողմից:

Ասորիների Եփրեմ Եպիսկոպոսը

Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսեան քաղաքի ազգաբնակչութեան կողմից:

Երևանի քաղաքագլխի պաշտօնակատար Բուենիաթեանը քաղաքի ազգաբնակութեան կողմից:

Ելիսաւէտպօլի քաղաքագլուխ Աղէլ—խան Ջաւատխանովը: Թիֆլիսի Բիրժայի կոմիտէն, յայանելով, որ նոյն օրը ի նշան օգոյ վահել է Բիրժան:

Թիֆլիսի վաճառականների աւագը:

Թիֆլիսի մեջչանների աւագը:

Մշակ և Արօր պարբերական հրատարակութիւնների խմբագրութիւնները:

Ալէքսանդրօպօլի ս. Աստուածածին աւագ եկեղեցու ծխական և Արղութեան աղջկանց դպրոցների հոգաբարձութիւնը:

Թիֆլիսի Մարիամեան—Յովնանեան աղջկանց դպրոցի հոգաբարձութիւնը:

Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովի և վարչութեան նախագահները:

Երևանի թեմական խորհրդի նախագահը:

Երևանի թեմական Հոգե. դպրոցի հոգաբարձութիւնը:

Ներսիսեան Հոգե. դպրոցի հոգաբարձութիւնը:

Թիֆլիսի Բիրժայի ծառայողների խումբը:

Ինժեներ Բաստամեանը:

Բաբուի հայ եկեղեցիների և դպրոցների հոգաբարձութիւնները:

Փոթիի հայ համայնքը:

Դոք. Թորգոմեանը և Պօլսից:

Թիֆլիսի հասարակաց ակումբի խորհուրդը:

Վլադիկավկազի հայ համայնքը:

Գորիսի քաղաքային ազգաբնակութեան կողմից քաղաքային աւագը:

Կարսի եկեղեցակ. հոգաբարձութիւնն ու ուսուցչական խումբը:

Բաթումի եկեղեցական հոգաբարձութիւնը:

Կովկասի մուսուլմանների բարեգործական ընկերութիւնը:

Երևանի օգտակար գիտելիքներ տարածող ընկերութեան կողմից՝ նախագահը:

Ալէքսանդրօպօլի քաղաքագլուխ և Կամսարականը քաղաքի ամբողջ ազգաբնակութեան կողմից:

Արմաւրի հայ դպրոցների ուսուցիչների և աշակերտների կողմից աւագ ուսուցիչը:

Թիֆլիսի ս. Սարգիս եկեղեցու դպրոցի հոգաբարձութիւնը:

Շուշու Թեմական հոգևոր և աղջկանց Մարիամեան դպրոց-
ների կողմից՝ տեսուչը:

Մերվի հայ դպրոցական վարչութիւնը:

Նոր—Նախիջևանի Թեմական դպրոցը:

Ղզլարի հայ երիտասարդութիւնը:

Ղուբայի հայ հասարակութիւնը:

Մոսկվայի հայ համայնքը, Վեհ. Հայրապետի Թաղման ներ-
կայացուցիչ ընտրելով Լևոն Սարգսեանին:

Թիֆլիսի ուսուցիչների և ուսուցչուհիների ընկերութեան
կենտրոնական վարչութիւնը:

Թիֆլիսի գաւառի ազնուականների պարագլուխ իշխան Թու-
մանովը:

Պետական Դումայի անդամ Յ. Սաղաթէլեանը:

Բագուի Հայոց մարդասիրական ընկերութիւնը:

Նուխու դպրոցական հոգաբարձութիւնը մանկավարժական
խորհրդի հետ միասին՝ Նորին Արքութեան Թաղման ներկայացու-
ցիչ ընտրելով Աշոտ եպիսկոպոսին:

Թիֆլիսի Թեմական խորհուրդը:

Ջուղայի հայ հասարակութիւնը:

Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերութիւնը:

«Հովիտ»-ի խմբագրութիւնը:

Դուչէթի բարեկարգիչ Ապրիլեանց քահ. և հոգաբարձուներ—
Մարտիրոսեան Աբրահամեանց, Միրաբեանց:

Դուչէթի քաղաքային աւագը քաղաքային վարչութեան կողմից
Թիֆլիսի Նորաչէն եկեղեցու հոգաբարձութիւնը:

Պարսից գէներալ կօնսուլ Սարգար Հիւմայիւնը Թիֆլիսից:

Թեմական տեսուչ Խղմալեանը Ալէքսանդրօպօլից:

Արմաւրի գեղարուեստ քաջալերողների կողմից կուսիկով:

Օնիի հայ հասարակութիւնը:

Արմաւրի գիմնադրայի հայ աշակերտները:

Տոմսկու համալսարանի ուսանողների համերկրացութիւնը:

Երևանի հոգևոր Թեմ. դպրոցի Ե. դասարանի աշակերտները:

Ջուլֆայի մուսուլման հասարակութիւնը:

Ղզլարի հայ դպրոցի ուսուցչական խումբը:

Արմաւրի եկեղ. ծխ. դպրոցների հոգաբարձութիւնը:

Թիֆլիսի հայ որբերէ խնամակալութեան վարչութիւնը:

Բագուի հայերը:

Կողկասի բարեգործական ընկերութեան Ալէքսանդրապոլի
ծիւղը:

Քութայիսի հայ հասարակութիւնը:

Թէոդոսիայի հայ հասարակութիւնը:

Ալէքսանդրապոլի ս. Փրկիչ եկեղեցու հոգաբարձութիւնը:

Եալթայի հոգաբարձութիւնն ու ուսուցիչները:

Թիֆլիսի կանանց բարեգործական ընկերութիւնը:

Բերլինի հայ ուսանողութիւնը:

Ղալաբի քաղաքապետութեւն քաղաքի հասարակութեան կողմից:

Կողկասեան Հայոց բարեգործական ընկ. Շուշիի ծիւղը:

Ալէքսանդր Մանթաշեանը Թիֆլիսից:

Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցու ծխ. հոգաբարձութիւնն,
ուսուցիչներն ու աշակերտները:

Թիֆլիսի Գայեանեան աղջկանց դպրոցի հոգաբարձութիւնը
իւր և ուսուցչական խմբի կողմից:

Ղարաքիլիսայի դպրոցների հոգաբարձութիւնը իւր, հոգևորա-
կանների և աշխարհականների կողմից:

Բաթումի եկեղ. հոգաբարձութիւնը:

Գորիսի դպրոցի հոգաբարձուներն ու ուսուցիչները:

Կողկասի Հայոց բարեգործական ընկ. Ախալքալաքի ծիւղը:

Գանձակի հայ հասարակութեան [կողմից Մելիք—Բէգլարով,
Խոջայով, Նարաթով, Մելիքով, Տէք Սահակով, Սահակով:

Ժայռի խմբագրութիւնը:

Ախալքալաքի հոգաբարձական և ուսուցչական խումբը, ներ-
կայացուցիչ կարգելով Սիրական Տիգրանեանին:

Աստրախանի հայ հասարակութեան կողմից առաջնորդ Մխի-
թար կպիսկոպոսը և ժողովի նախագահ Սօբօլով:

Ախալքալաքի հայ վաճառականութիւնը:

Բաքուի Հայոց եկեղեցիների հոգաբարձութիւնը:

Բաթող փաշան Ալէքսանդրիայից (Եգիպտոս):

Կարսի Հայոց դպրոցի հոգաբարձական և ուսուցչական խումբը:

Վլադիկաւկազի հայ հասարակութիւնը:

Բաթումի եկեղ. հոգաբարձութիւնը:

Օլթիի հայ դպրոցի հոգաբարձութիւնն ու ուսուցչական խումբը:

Բաքուի հայ դպրոցների ուսուցչական խորհուրդը:

Պետրովսկի հայ հասարակութիւնը, ուսուցիչներն ու աշա-
կերտները:

Թիֆլիսի արհեստավորների դասակարգի կողմից, արհեստավորների պետ Կ. Սերովբեանց.

Բաքուի Կուլտուրական Միութեան կողմից Պատիսով:
Մոսկվայի Լազարեան Ճեմարանի կողմից վերատեսուչը:
Հորիզոնի խմբագրութիւնը:

Աղայեանը, Լէօ, Յովհաննէս Թումանեան:

Նովորոսիյսկի հայ հասարակութիւնը:

Արմաւրի եկեղեցիների հոգաբարձութեան և երեսփոխանների կողմից բարեկարգիչ Թուռեկեանց քահանայ:

Նոր Նախիջևանի եկեղեցական հոգաբարձութիւնը:

Նոր Նախիջևանի «Լոյս» լրագրի խմբագրութիւնը:

Մերլի հոգևորականութեան, եկեղեցական հոգաբարձութեան և հասարակութեան կողմից երեսփոխան Տէրաէրեանց:

Արմաւրի բարեգործական ընկերութեան վարչութիւնը:

Ղուրայի հոգաբարձական և ուսուցչական խումբն ու երիտասարդութիւնը:

Մերլի ուսուցիչները:

Սուքիասեան, Կ. Պօլսից:

Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ Սահակ Արքեպիսկոպոսը, իւր թեմի կողմից ներկայացուցիչ առաջարկելով Տ. Բաղբատ վարդապետին և Ռաչմաճեանին:

Կարնոյ առաջնորդ Սմբատ եպօք իւր և թեմի հոգևորականների և աշխարհականների կողմից:

Ալէքսանդրօպօլի Հոգևոր Կառավարութիւնը հայ հասարակութեան կողմից:

Թիֆլիսի քահանաների փոխադարձ օգնութեան ընկերութեան վարչութիւնը:

Ամասիայի Առաջնորդ Իրրիանոսեան:

Գաղատիայի Առաջնորդ Բարգէն եպօք:

Շամախույ Առաջնորդ Անանիա Արքեպօս, իւր և թեմի կողմից:

Կախ—աւանի քահանան:

Կովանդի հասարակութեան կողմից Ներսէս քահանայ Արրահամեանցը:

Սուրամի հայ հասարակութեան կողմից բարեկարգիչ Յովսէփ քահ. Առիւծեանց, հոգաբարձութիւն, երեսփոխ. Յարութիւնեանց:

Տաշքենդի հայ հասարակութեան կողմից Մարկոս քահանայ:

Մոսկուայի Յարութիւն աւագ քահանայ Պօլսիկեանց հայ

հասարակութեան կողմից, յայտնելով, որ ներկայացուցիչ կարգուած է Լեոն Սարգսեանը:

Թիֆլիսի պրատուլու քահանաների ժողովի կողմից նախագահ Սիմէօն քահանայ Ռուխիլաձէ:

Բաքուի մուսուլմանների կրթական նիջատ ընկերութեան կողմից նախագահ Աշուրբէկով:

Երևանի Օգտակար Գիտելիքներ Տարածելու ընկերութեան երեկոյեան դասընթացքների սեկցիան:

Սլաւեանակի հայ հասարակութիւնը:

Քարվանսարայի հայ ժողովուրդը:

Նոր-Նախիջևան քաղաքը:

Նոր նախիջևանի աղքատ շաշակերտներին օգնող ընկերութիւնը Եյսկի հասարակութեան կողմից՝ եկեղեցական հոգաբարձութիւնը:

Խարրինի Հայոց գաղութը:

Ս. Նինէի աղջկանց ուսումնարանի կողմից՝ ս. Նինէի կանանց բարեգործական ընկերութեան նախագահուհի ստատուս—գամա կոմսուհի Վորոնցովա—Դաշկովա:

Բաշնորաշէնի հայ հասարակութիւնը:

Լուգանակիի հայ գաղութը:

Եգիպտոսի հայերի կողմից առաջնորդ Մկրտիչ եպս. Աղաւնունի: Բագուի Հայոց կուլտուրական Միութ. ձեռագործի զպրօցի կանանց հոգաբարձութեան կորհուրդը:

Բագուի բօրսայի ընկերութեան բոլոր անդամների կողմից առանց խտրութեան կրօնի, Բօրսայի Յանձնաժողովի նախագահ Թաղիանոսեանը:

Խարկովի հայ գաղութը:

Գուգապուզի և Մցարայի քահ. Տէր Մկրտչեանցը իւր և իւր հօտի կողմից:

«Հասկեր» Մանկական Յիթերթի խմբագրութիւնը Թիֆլիսից:

Հայոց ազգագրական ընկերութեան նախագահ Մելիք-Աղաբեանը, ներկայացուցիչ կարգելով Ճարտարապետ Տէր Սարգսեանին:

Զմիւռանիայի առաջնորդ և խառն ժողովի նախագահ Մատթէոս վարդապետ Ինձէեան:

Զաքաթալայի հայ հառարակութեան կողմից երեսփոխան Բէկ-Յովսէփեանց:

Դաղէթ—Խաչենի հասարակութեան կողմից Ամիրջանեանց քահանան:

Մոզզոկի հայ հասարակութիւնը ցաւակցութեան հետ յայտնում է, որ հասարակութիւնը Հանգ. Հայրապետի անունով կազմում է դրամագլուխ, տեղւոյն հայ բարեգործական ընկերութեան համար:

Ախուրեանի խմբագրութիւնը Ալէքսանդրօպօլից:

Ղզլարի կանանց ընկերութեան կողմից վարչութիւնը:

Ալէքսանդրօպօլի աղքատ աշակերտներին օգնող «Սրիմեան Հայրիկ» ընկերութեան վարչութիւնը:

Նոր Նախիջևանի ոչ-դպրոցական հասակի մանկանց կրթութեան օգնող ընկերութիւնը:

Սեանի վանահ. Սարգիս եպս.-ը իւր և միաբանութեան կողմից:

Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Պետրիգօրսկի ճիւղի վարչութիւնը:

Լազոզեղի Բագրատ քահ. Սուքիասեանը իւր և Ժողովրդի կողմից:

Բուրմիսի Ժողովուրդն և քահանան:

Լազոզեղի հայ հոգաբարձութիւնը իւր և դպրոցական կազմի կողմից:

Նոր-Բայազէտի Քաղաքային աւագ Բազիլիկանը:

Մոսկուայի գիւղատնտեսական ճեմարանում Անդրկովկասի համերկրացիների ընդհանուր Ժողովը:

Ղարաբաղի թեմը—Ներկայացուցիչ կարգելով Մեսրօպ եպս. Տէր Մովսէսեանին:

Լաբինակիի հայերը:

Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Դանիէլ արքեպիսկոպոսը իւր և միաբանութեան կողմից, ներկայացուցիչ կարգելով Մեսրօպ եպս.ին:

Մոսկվայից Տիկին Քանանեան և Տիկին Ա.քիմեանցը:

Եալթայի եկեղեցու քահանան և երեսփոխանը, որով յայտնում են, թէ ի Տէր հանգուցեալ Հայրապետի թաղման առիթով ի ներկայութեան բազմաթիւ Ժողովրդեան հանդիսաւոր Ս. պատարագից յետոյ հոգեհանգիստ է կատարուել:

Վարազի հոգաբարձութիւնը:

Տաշքենդի արուարձանի հայերը:

Տրապիզոնի հայերի կողմից՝ առաջ. փոխանորդ Յուսիկ քհնյ.

Նովոչերկասկի հայ համայնքը:

Մոսկվայի հայ եկեղեցիների խորհուրդը:

Սուխումի հայ համայնքը:

Սեաստօպօլի հայ համայնքը:

Կարօ՞ք քաղաքային իրաւարանը՝ նախագահի և դեպուտատների ստորագրութեամբ արտակարգ նիստ կազմելով:

Արդուինի հայ հասարակութեան կողմից եկեղեցական հոգաբարձութեան նախագահը:

Եւպատորիայի հայերի կողմից երեսփոխանը:

Ղզլարի հայ հասարակութիւնը և դպրոցական հաստատութիւնները:

Ս. Պետերբուրգի տեխնօլօգիական ճեմարանի ուսանողները:

Բերլինի հայ ուսանողութիւնը:

Ղզլարի քաղաքապետը:

Թաւրիզի Արամեան դպրոցի հոգաբարձութիւնը:

Ատրպատականի Թեմ. խորհուրդը.

Ասխաբատի հայ հասարակութիւնը, ներկայացուցիչ կարգելով Ստեփան Կանայեանցին:

Գորեոյ հասարակութիւնը, ներկայացուցիչ կարգելով բժ. Զաքարիա Տէր Մինասեանին.

—Մոզդուլի հայ հասարակութիւնը ներկայացուցիչ կարգելով

Յ. Յովհաննիսեանին յանձնարարելով պսակ զնել դագաղի վերայ:

Աղբիւր—Տարազի խմբագրութիւնը, ներկայացուցիչ կարգելով պ. Յովհաննէս Յովհաննիսեանին:

Կովկասի Կայսերական բժշկական ընկերութիւնը:

Հին—Խրիմի եկեղեցու ծուխ Սուբաչիում բնակուող տաճկաստանցի հայերը:

Ալէքսանդրօպօլի ս. Լուսաւորիչ եկեղեցու հոգաբարձութիւնը:

Նոր Նախիջևանի ժողովարանի կողմից աւագների խորհուրդը:

Թագանրոզի հայ ժողովրդի և իւր կողմից Յովհաննէս քահ.

Օգսենտեանցը:

Մոսկվայի հայ տիկիներին բարեգործական ընկերութեան վարչութիւնը:

Երևանի ս. Գայեանեան աղջկանց դպրոցի ուսուցիչները:

Ալէքսանդրօպօլի Արդութեան աղջկանց դպրոցը:

Լենքորանի Ստեփան քահանան իւր և իւր հօտի կողմից:

Կոստանդնուպօլիս—Պերա, Լիասի:

Մանգլիս, Մեծ և Փոքր Թօնեթների հայ հասարակութեան կողմից Անդրէաս քահանայ, երեսփոխ Նիդզուրաբով, հոգաբարձութեամբ:

Շուշի քաղաքի ազգաբնակութեան և քաղաքային ինքնավարութեան կողմից քաղաքապետ Քալանթարով:

Գանձակի փոխանորդ Լեոն վարդապետը վիճակի հոգևորականութեան և իւր կողմից:

Աստարայի հայ հասարակութեան կողմից Յունանեանց, Ներսէսով:

Թիֆլիսի գրամատիքական ընկերութիւնը՝ ներկայացուցիչ կարգելով Քրիստափոր Տէր Սարգսեանին:

Արմենակի հայ հասարակութիւնը:

Գորիսի երիտասարդութիւնը, ներկայացուցիչ կարգելով Տէր Մինասեանին:

Սիւնեաց փոխանորդութեան դպրոցական տեսուչ Տէր Մինասեան, յայտնելով, որ ներկայ լինի թաղմանը:

Դերբենդի Րէալական ուսումնարանի և գիմնազիայի աշակերտները:

— Պօղոս քհյ. Բեգելեանը Նովոշերկասկի բանտարկեալ հայերի խնդրանքով հոգեհանգիստ կատարելուց յետոյ:

Թարթարի հայ հասարակութիւնը:

Անդրժանի հայ հասարակութեան կողմից Տէր Վարդանեան քահանան:

Ճիւնվալի հայ հասարակութիւնն ու դպրոցական կազմը:

Վարչավայրի հայ գաղութների կողմից Րոստոմեանց:

Ռեզոֆի Սարգիս քահանան և հոգաբարձութիւնը:

Երևանի թեմական հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը, յայտնելով՝ որ Հայրապետի թաղմանը ներկայ կը լինի ամբողջ կազմով, կը պահի դպրանոցում յանուն հանգուցեալի վեց որդեգիր չքաւոր և ընդունակ աշակերտներից, հոգաբարձութեան կողմից կը դնի արծաթեայ պսակ:

Բալախանիի Տիրենտովեան ընկերութեան մի խումբ հայեր

Խաչի գիւղի հասարակութիւնը:

Կարասու-Բազարի հայ հասարակութիւնը:

Դերբենդի հայ հասարակութիւնը:

Գեորգեակու հայ ծխականները, հոգաբարձութիւնը և ամբողջ գաղութը:

Շուլաւերի հայ հասարակութիւնը:

Ախալցխայի հայ հոգևորականութիւնը:

Հին Նախիջևանի հոգևոր կառավարութիւնը:

Մոսկվայի Լազարեան ճեմարանի գիմնազիական դասարանի աշակերտները:

Երևանի պարսկական կօնսուլը:

Շուշուայ արհեստաւորների դասակարգը:

Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի հոգաբարձական խորհուրդը:

Բաթումից Մեսրոպ աւագ քահ. Մելիքանը:

Բաքուից Միքայէլ Բաբաջանեանը:

Սոչիի հայ հասարակութիւնը:

Կազախի հայ հասարակութիւնը:

Թեյաւի բնակիչների կողմից քաղաքային աւագը:

Սզնախի հայ հասարակութեան կողմից Հայրապետի թաղման օրի առիթով քաղաքային աւագը:

Համամուրի հասարակութիւնը, Հայրապետի թաղման օրի առիթով:

Նուխիի հայ հասարակութիւնը:

Դիլիջանի հայ եկեղ. հոգաբարձութիւնը:

Բորժոմի հայ հասարակութեան կողմից քահ. Մանուկեանցը:

Մայկոպի հայ դպրոցի հոգաբարձութիւնն ու ուսուցիչները:

Գանձակի ս. Լուսաւորիչ եկեղեցում հանդիսաւոր ս. պատարագ և հոգեհանգիստ է կատարուել ի Տէր հանգուցեալ Հայրապետի թաղման օրը՝ ի ներկայութեան նահանգապետի, բաղմաթիւ ժողովրդի և բոլոր դպրոցական հաստատութիւնների, ուսուցիչների ու աշակերտների:

Թիֆլիսի ս. Սարգսի դպրոցի ուսուցիչները:

Ս. Էջմիածնի վերանորոգութեան յանձնաժողովը Թիֆլիսից:

Ընտանիքի նորահաստատ, յանուն Մատթէոս կաթողիկոսի, բարեգործական ընկերութիւնը:

Նոր նախիջևանի կանանց բարեգործական ընկերութիւնը:

Պետաիգօրսկիի եկեղեցական հոգաբարձութիւնը ներկայացուցիչ կարգելով Սիրական Տիգրանեանցին:

Կազանից Սոանիկեան:

Թիֆլիսի Մեղու ընկերութիւնը յատուկ հոգեհանգիստ կատարելուց յետոյ:

Բաբուից

Դաւիթ Աւան-Իւզբաշեան:

Բրուսսայի բոլոր պաշտօնական մարմինների կողմից Յովհաննէս արքեպիսկոպոս:

Փարիզի, Բելժիքայի հայերի կողմից հոգաբարձուք Ներսէսեան, Էլմասեան Ճէվահիրճեան, Մատթէոսեան:

Թեհրանի հայութեան կողմից Ազգային խորհուրդը:

Յրէս-Նօքալայից Տօնապետեան:

Հեռագիրներ վեհի քաղման օրը

Թեմիր-խան-Շուբայի հայ հասարակութիւնը:

Ստաւրոպօլի հայ հասարակութիւնը:

Բուխարայի հայ հասարակութիւնը:

Գրակալի հայ հոգաբարձութեան և իւր կողմից Բագրատ
Միրիմանեանը:

Եղիստիայի (Մողղոկի մօտ) հայ հոգաբարձութիւնն ու դպրո-
ցի ուսուցիչներն:

Կիեվի հայ համայնքի կողմից Խորէն քահ. Մնացականեան,
երեսփոխան Յարութիւնեանց, պրօֆեսօր Եղիազարով և Յակովբ.

Քիչնից—Բարսեղ աւագ քահանայ Խաղանջեանցը:

Եկատերինօղարի հայ համայնքի կողմից Զաքարեանց քահ.

Կավկազսկայա կայարանից հայերը:

Կիեվի հայ ուսանողները:

Մայկոպի հայ բարեգործական ընկերութիւնը:

Մանջուրիա կայարանի սակաւաթիւ հայերը:

Օլթիից Վարդան քահ. Սարափեանցը:

Յաւակցական քղբեր

Դուչէթի գաւառի գործակալ Յուսիկ քահ. Ապրիլեան

Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Դուչէթի ճիւ-
ղի վարչութիւնը:

Աշտարակի ծխ. դպրոցների հոգաբարձական և ուսուցչական
խառը ժողովը:

Վաղարշապատի ծխ. դպրոցների հոգաբարձական և ուսուց-
չական խառն ժողովը:

Կոստանդնուպօլսի սահմանադիր ռամկավարական կուսակ-
ցութեան ներկայացուցիչ Ալէքսանդր Քալանթար:

Տաշքենդի հայ հասարակութեան ներկայացուցիչ Ա. Քալանթար

Ն Ե Ր Կ Ա Յ Ա Յ Ո Ի Յ Ի Չ Ն Ե Ր

Ա. Փոխարքայի և նորա ամուսնու կողմից

Սենատօր Է. Ա. Վատայի.

Գեներալ մայոր Ա. Ի. Լազարեան,

Բ. Վրաստանի Էկզարխ Իննովիենտոս արքեպիսկոպոսի
կողմից.

Գրիգորի եպիսկոպոս.

Պիմէն վարդապետ.

Անտոնի վարդապետ.

Թիֆլիսից

Գ. Քաղաքային Դումայի կողմից.

Քաղաքագլուխ Ա. Ի. Խաւրիսով.

Վաղաձէ.

Նէպրինցև.

Դ. Թիֆլ. նահանգի ազնուականութեան կողմից.

Սագինով.

Ե. Թիֆլ. Հայ հասարակութեան կողմից.

Մարկոս Դօլուխանեան.

ԲԺ. Վ. Արծրունի.

Գնդապետ Ա. Դ. Սուրէնեանց.

Ինժինէր Արչակ Բաբեան.

Տ. Ֆլորա Վարդանեան.

Զ. Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան կողմից.

Տեսչի պաշտօնակատար Յ. Խունունց.

Ն. Կաճկաճեանց.

Յ. Ամիրխանեան.

Է. Թիֆլ. Հայոց դրամատիկական ընկերութեան կողմից.

Քրիստափոր Տէր Սարգսեան

Ը. Թիֆլ. Մեշչանների վարչութիւնից.

Արտեմ Աբրիամով.

Գուրգէն Օդեանց.

Վարչութեան նախագահ Բ. Առաքելեան.

Թ. Թիֆլ. Հայուհեաց շքարեդործական ընկերութիւնից.

ժ. Թիֆլ. Ժողովարանի աւագները

Տ. Էնֆիազեանց.

Չ. Մամուլեանց.

ժԱ. Թիֆլ. Մարիամեան Յովնանեան աղջկանց դպրոցի կողմից.

ԲԺ. Բ. Նաւասարդեան.

Համբարձում Առաքելեան,

ժԲ. «Մեղու» աշխատանքի ընկերութեան կողմից.

Տ. Ֆլորա Վարդանեան.

ժԳ. Թեմական խորհրդի կողմից.

Ս. Աբովեանց

Յ. Տէր Միրաքեանց:

ժԴ. Կովկասեան Հայոց հրատարակչական ընկերութեան կողմից.

Իսահակ Յարութիւնեան.

Գ. Խատիսեան.

ժԵ. Հայ հողեորականութեան կողմից.

Յովհաննէս⁷ յաւագ քահանայ Մարտիրոսեան
Սարգիս աւագ քահ. Շիրոյեանց.

ժԶ. Բորսայի կոմիտէի կողմից.

Ս. Գիւրբէկեան.

Ս. Սուլխանեան.

Գ. Խատիսեան:

ժԷ. Վաճառականութեան կողմից.

Ա. Մելրով (վաճառականների աւագ).

Խ. Աֆրիկեան.

Կ. Խալաթեան.

Դ. Նախշունեան.

Մ. Ղուլիջանեան.

ժԸ. Ս. Սարգսի ծխ. հոգաբարձութեան կողմից.

Յ. Գրիգորեան

ԺԹ. Երկաթուղային բանւորներէ կողմից՝
 Բազրատ Շիրմազանեան.
 Հմայեակ Սերովբեան.

Ի. Մխահան դպրոցներէ կողմից.
 Գեղէօն Միրզայեան
 Մկրտիչ Մնացականեան.

ԻԱ. Ա.դ.գ. ընկերութեան կողմից.
 Ճարտարապետ Տ. Սարգսեան.

ԻԲ. «Նոր-դպրոց» թերթի, ուսուցչական միութեան և հրատարակչական ընկերութեան կողմից.

Իսահակ Յարութիւնեան

ԻԳ. Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան կողմից՝
 ԲԺ. Բազրատ Նաւասարդեան
 Ա. Պօղոսեան.

Սամսոն Յարութիւնեան.

ԻԴ. Ռուսաստանի հայ կաթողիկէներէ կողմից.
 Մկրտիչ Քիւրքճեան.

ԻԵ. Սուրհանդակ և Խաթաբալա լրագրներէ կողմից.
 Աստ. Երիցեան.

ԻԶ. «Հովիտ» լրագրի կողմից.
 Բենիկ վարդապետ.

Բազուից

ԻԷ. Հասարակութեան կողմից.
 Ա. Ս. Մելիքեանց.

Կ. Յ. Խատիսեան.

Գ. Յ. Տէր Միքայէլեանց.

ԻԸ. Բազուի քաղաք. ինքնավարութեան կողմից.
 Կոստանդին Իրիցկի.

Նաջաֆ Կուլիբէկով.

Ստեփան Այվազեան.

ԻԹ. Մարդասիրական ընկերութեան կողմից.
 Ե. Թաղիանոսեան.

Յ. Տ. Միքայէլեան.

Ս. Այվազեան.

Լ. Ծխական հոգաբարձութեան կողմից.

Տիգրան Բուդաղեան.

Գարեգին քահ. Ղուկասեան.

Արսէն Բալայեան.

ԼԱ. Նոր—Նախիջևանի կողմից.

ԲՃ. Միրզայեանց.

ԲՃ. Ռէլիեան.

Վաճառական Շապշնիկեան.

ԼԲ. Գորբի հայ հասարակութեան կողմից.

ԲՃ. Զարարիա Տէր Մինասեան.

ԼԳ. Շամախու հայ հասարակութեան կողմից.

Սմբատ Սարգիսբէկեան.

Գրիգոր Ֆոլոսեան.

ԼԴ. Կ. Պոլսոյ Ազգ. Կենտ. վարչութեան կողմից.

Մեսրոպ եպիսկ. Տէր Մովսէսեան

Աղէքսանդր Մելիք Աղարեանց.

Համբարձում Առաքելեան.

ԼԵ. Երուսաղէմի Պատրիարքարանի կողմից.

Մեսրոպ եպս. Տէր Մովսէսեան.

ԼԶ. Կ. Պոլսոյ սահմանադիր ուսման վարչական վարչ. կողմից.

Ալ. Քալանթար.

ԼԷ. Մոսկուայի հայերի կողմից.

Լևոն Սարգսեան, Տեսուչ Աղէքսանդրօպօլի առևտրական դպրոցի.

ԼԸ. Ս. Պետերբուրգի եկեղեցական խորհրդի կողմից.

Յովհաննէս Յովհաննիսեան.

ԼԹ. Կարս քաղաքի կողմից.

Խարատով

Տէր Սաղաթէլեան.

10. Բեստարաբխայն Առաջնորդի կողմից.
Կարապետ Եպիսկոպոս.

10Ա. Տաշքենդի հայերն կողմից.
Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոս.

10Բ. Քութայիսի հայերն կողմից.
Դիմիտրի Պոպովեանց
Ս. Տէր Գաբրիէլեանց.

10Գ. Ալէքսանդրոպօլի ուսուցչական ընդհանուր ժողովի կողմից.
Յակովբ քահ. Խաչվանքեան.
Երուանդ Տէր Մինասեան.

10Դ. Ալէքսանդրոպօլի քաղաքային Գումայի կողմից.
Նախկին քաղաքագլուխ Յովսէփ Տիգրանեան.
Բժայ. Ա. Բարայեան.

Որոշելով քաղաքային աղջկանց առաջին դպրոցը կոչել
Իզմիրլեան.

10Ե. Ալէքսանդրոպօլի «Ժայռ» լրագրի կողմից.
Ե. Գրիգորեան.

10Զ. Սարգարապատի գործակալութեան կողմից.
Գարեգին քահ. Տէր Ստեփանեան.
Յովակիմ Աղախանեան.
Սեգրակ Կարապետեան.

10Է. Նուլավէրի կողմից.
Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեան.

10Ը. Գանձակի հայ հասարակութեան կողմից.
Մովսէս-բէկ Եպիսկոպոսեան.
Աղաջան Տէր Սարգսեան.

10Թ. Փարաքարի կողմից.
Ռուբէն Տէր Գէորգեան.

10Ր. Ատխաբատի հայ հասարակութեան կողմից.
Ստեփան Կանայեան.

ԾԱ. Պարսկաստանի և Հնդկաստանի հայ թեմի կողմից.
 Բագրատ փարդապետ Վարդազարեան.
 Տիգրան Ռաշմաճեան.

ԾԲ. Մոզդոկի հայ հասարակութեան կողմից.
 Յովհաննէս Յովհաննիսեան.

ԾԳ. Աղբլբլ-Տարաղի խմբագրութեան կողմից.
 Յովհաննէս Յովհաննիսեան.

ԾԴ. Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Ախալքա-
 լաքի ճիւղի կողմից.

Սամսոն Յարութիւնեան.

ԾԵ. Ախալքալակի Տխ. Հոգաբարձութեան կողմից.
 Ս. Տիգրանեան.

ԾԶ. Աստրախանի հայ հասարակութեան կողմից.
 Յովհաննէս Թումանեան.

ԾԷ. Ղարաբաղի թեմի կողմից.
 Մեսրոպ եպիսկոպոս.

ԾԸ. Գէորգեսի հայերի կողմից.
 Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոս.

ԾԹ. Թէլաւի հայերի կողմից.
 Յովհաննէս Արքեպիսկոպոս Շիրակունի.

Կ. Ղուբայի հայերի կողմից.
 Գուրգէն Էդիլեանց.

ԿԱ. Երևան քաղաքի կողմից.
 Քաղաքագլխի պաշտօնակատար Արամ Բունիաթեանց.
 Վասիլ Եղիազարեան.

Ա. Գաբրիէլեան.

Ռուստամ-խան Մահմէտ-բէկով Միր-Բաղր.

ԿԲ. Նուխու գալոցների կողմից.
 Աշոտ եպիսկոպոս.

ԿԳ. Վլադիկաւկազի հայ հասարակութեան կողմից.
 Գրիգոր Գ. Սիմէօնեան.

Մկրտիչ Յ. Տէր Աբրահամեանց.

ԿԳ. Թիֆլիսի արհեստաւորներէ կողմից.

Կ. Սերովբեանց.

Էստատէ Մայսուրաձէ.

Եագօր Օթարեան.

ԿԵ. Գորիսի ներկայացուցիչ.

Տէր Մինասեան.

ԿԶ. Պետիգօրսկի եկեղ. Հոգաբարձութեան կողմից.

Սիրական Տէր Մարտիրոսեան.

ԿԷ. Ագքիրմանի հայ հասարակութեան և Աւանայ մենաստանի միաբանութեան կողմից

Արտակ վարդապետ:

ԿԸ. Շուշուայ արհեստաւորներէ կողմից

Բենիկ վարդապետ:

Պ Ս Ա Կ Ն Ե Ր

Արժաթեայ

1. Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքայից և իւր ամուսնուց:
2. Թիֆլիս քաղաքից:
3. Թիֆլիսի Ժողովարանից:
4. Նոր Նախիջևանի քաղաքային դումայի կողմից:
5. Նոր Նախիջևանի հայ հասարակութեան կողմից:
6. Հաշտարխանի հայութիւնը:
7. Երևան քաղաքի կողմից:
8. Երևանի Թեմական խորհրդից:
9. Ներսիսեան հոգևոր դպրոցից:
10. Բաքուի քաղաքային վարչութիւնից:
11. Թիֆլիսի հայ հասարակութիւնից:
12. Երևանի Թեմ. դպրոցի հոգաբարձութիւնից:
13. Թիֆլիսի մեշյանների հասարակութիւնից:

- 14, Տաշքենդի հասարակութիւնից:
- 15, Կարս քաղաքի կողմից:
- 16, Կովկասի Հայոց բարեգործական ընկերութիւնից:
- 17, Թիֆլիսի նահանգի ազնուականութիւնից:
- 18, Թիֆլիսի վաճառականութիւնից:
- 19, Արմաւրի հայ հասարակութեան կողմից պսակի փոխարէն 500 ռ.

Մետաղեայ

- 1, Վլադիկավկազ քաղաքի հայ հասարակութիւնից:
- 2, Թիֆլիսի ապրանքատար կայարանի հայ բեռնակիր բանւորներից:
- 3, Գանձակի հայ հասարակութիւնից:
- 4, Թիֆլիսի հայ և վրացի գինեվաճառներից:
- 5, Մոզդուկի հայ հասարակութիւնից պսակի տեղ 25 ռ. որ յատկացուեց հանգուցեալ Հայրապետի անուան ֆոնդին:

Վեճափառ Հայրապետի յուղարկաւորութիւնը

Ի Տէր հանգուցեալ Հայրապետի մարմինը դեկտեմբերի 11—18-ը դիասեղանի վերայ դրուած մնաց վեհարանի ընդունելութեան դահլիճում. երկ-երկու քահանայ և վարդապետ, հերթով Սաղմոս և Ս. Աւետարան էին կարդում աջ և ձախ կողմին կանգնած. գլխավերևը և ոտների կողմը դրուած էին մի մի արծաթեայ մեծ աշտանակ ժշտավառ կերոններով: Ամեն օր առաւօտեան 10—11 ժամը կատարուում էր մահագոյժ զանգահարութիւն և երեկոյեան ժամերգութիւնից յետոյ նոյնպիսի զանգահարութեամբ ամբողջ միաբանութիւնը խաչ-խաչվառով խուռն բազմութեան ներկայութեամբ վեհարանում կատարում էր ամբիծք և հանգստեան պաշտօն:

Դեկտեմբերի 18-ին շաբաթ օրը ժամը 12—2-ը կատարուեց հանգուցեալ Հայրապետի մարմնի լուացման

կարգը և մարմինը հայրապետական զգեստով զգեստաւորուած դրուեց զազաղի մէջ, որ յսքօղուեց իւր օձման հայրապետական քօղով:

Ժամը 2-ին արգէն հասել էին Վրաստանի Էկզարխ Բարձր—Սրբազան Խննովկենտիստ արքեպիսկոպոսի ներկայացուցիչները—Կրիգորի սրբազան եպիսկոպոսը և Պիմէն և Անտոնի վարդապետները ուղեկցութեամբ Երևանի պալատուալ եկեղեցիներէ բարեկարգչի, և ըաղաքների ու հաստատութիւնների պատգամաւորները հայ և օտարազգի:

Յուզարկաւորութեան ներկայ էին Շամախու առաջնորդ. Տ. Անտոնի արքեպիսկոպոսը, Ատրպատականի առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսը և Երևանի Փօխութեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսը:

Դրանց և խուռն ժողովրդի ներկայութեամբ կատարուեց տան կարգը, որից յետոյ Հայրապետի մարմինը դադաղով, որ բարձել էին եպիսկոպոսներն ու վարդապետները, դուրս հանուեց վեհարանից. առաջին հանգիստը կատարուեց վեհարանի ներքին բակում. նոյն կարգով հանգիստներ կատարուեցին վեհարանի արտաքին դարպասի առաջ, տաճարի արևմտեան սալայատակի վերայ և զանգակատան մէջ. և «Զօգորմութեանց քոց դուռն բաց մեզ Տէր» շարականը երգելով դադաղը մուծուեց եկեղեցի և դրուեց Ս. Իջման սեղանի առաջ: Այնուհետև կատարուեց երեկոյեան ժամերգութիւնը:

Հանգուցեալ Հայրապետի մարմինը յուզարկաւորուած էր վեհարանի ներքին բակից սկսած՝ մինչև տաճար մուծանելը հայրապետական հովանու տակ, որի սիւները բռնել էին պատգամաւորները: Դադաղի առաջից գնում էին երկու վարդապետ հայրապետական գրօշաւօր խաչաւազանը բարձրացրած և դադաղի ետևից՝ գաւազանակիրը՝ Մեսրոպ վարդապետ Նշանեանը բռնած հայրապետական գաւազանը, սև քօղով պատած: Երկու վարդապետ սարկաւազի զգեստով խնկարկում էին:

Երեկոյեանը ժամը 8—10 կատարուեց հսկման ժամերգութիւնը.

Ամսիս 19-ին կիւրակէ օրը ս. պատարագը սկսուեց առաւօտեան ժամը 9¹/₂-ին. պատարագին էր Ամենապատիւ Տէր Գէորգ արքեպիսկոպոսը: Ներկայ էին Նորին Կայսերական Մեծութեան կովկասեան փոխարքայի կողմից՝ Նորին Պայծառափայլութեան քաղաքացիական մասի օգնական սենատոր է. Ա. Վատացի, Նորին Պայծառափայլութեան գեներալ յանձնակատար գեներալ—մայեօր Ա. Ի. Լազարև. Վրաստանի էկզարխ Բարձր—Սրբազան Իննովկենտիոս արքեպիսկոպոսի կողմից՝ Սրբազան Գրիգորի եպիսկոպոսը և Պիմէն ու Անտօնի վարդապետները. Երևանի նահանգապետ գրաֆ Վ. Փ. Տիգէնհաուզէն, Երևանի կազեօննայա պալատայի կառավարիչ Լենեակը. ներքին գործոց նախարարութեան այլադաւանների հոգևոր գործոց գեպարտամենտի յանձնարարութիւնների պաշտօնեայ Ա. Վ. Պետրով, քաղաքների, զանազան հաստատութիւնների, դպրոցների և բարեգործական ընկերութիւնների ներկայացուցիչները, և անհամար ժողովուրդ:

Պատարագին՝ «ողջոյն»-ի ժամանակ եկեղեցու աւանդատանից զգեստաւորուած դուրս եկան Տ. Տ. Սուքիաս, Անանիա, Յուսիկ արքեպիսկոպոսները, և Աշոտ ու Կարապետ եպիսկոպոսները և կանգնեցին հանգուցեալ Հայրապետի դագաղի մօտ: Պատարագիչ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը աւագ սեղանից իջնելով եկաւ Ս. Իջման սեղանը. ուր և կատարեց օծման կարգը, որից յետոյ Նորին Ամենապատուութիւնը ասաց մօտաւորապէս. «Անցեալ տարի սեպտեմբերի 13-ին համօրէն ազգից ընտրուած Հայրապետի օծումն կատարուեց համօրէն ազգի պատգամաւորներ ներկայութեամբ: Բոլորիս սիրտը լցուած էր անսահման բերկրութեամբ՝ որ Լուսաւորչի աթոռի վերայ բազմում է ամենայն բարեմասնութիւններով օժտուածը: Ընտր-

ուած Հայրապետը ներշնչեց մեզ յոյս՝ թէ ամենայն եռանդով ջանալու է եկեղեցու պայծառութեան, Մայր Աթոռի նիւթական ու բարոյական վերաշինութեան և մեր եկեղեցական դպրոցական բարեկարգութեան համար: Մենք հոգևորականներս ու աշխարհականներս հաւատացած էինք, որ եկեղեցու վարչութեան ղեկը գտնուում է ըստ ամենայնի արժանաւոր ձեռքերում: Այժմ, խորին վշտով և տրտրութեամբ համակուած ենք, որովհետև Աստուծոյ հաճոյ եղաւ բառնալ մեր գլխից մեր տէրը և նրա ծրագրած գործունէութեան շատ փոքր մասին միայն սկիզբն դրուեց, մնացած մեծ մասը մնաց անկատար: Այժմ ահա, այնքան յոյսեր տուող, այնքան եռանդով գործի կպած Հայրապետը յաւիտենական հրաժեշտ է տալիս այն սուրբ սեղանին, որի վերայ 40 տարուց աւելի արժանաւորաբար պատարագել է կենդանեաց և ննջեցելոց համար, հրաժեշտ է տալիս հոգևորական դասին, որի փառքն ու պարծանքն է եղել իւր մաքուր վարք ու բարքով և պարտաճանաչութեամբ, հրաժեշտ է տալիս այն ժողովրդին, որի բարւոյն համար տքնել է որպէս ուսուցիչ, որպէս քարոզիչ, որպէս խորհրդական պաշտօնեայ և որպէս հոգևոր հովիւ:

Նա իւր ընթացքը կատարելով գնում է ի յաւիտենական խաղաղութիւն: Աղօթենք, որ Աստուած Նորին Սրբութեան հանգիստը քաղցր անի, և Հոգին Սուրբ մխիթարի մեր վշտագնած սիրտը ի բաշին ուղղելով մեր միտքը Ս. Լուսաւորչի թափուր գահի համար արժանաւոր գահակալ և Քրիստոսի այրիացած եկեղեցու համար արժանաւոր փեսայ ընտրելու:

Թող Աստուած լսի մեր աղաչանքը և ողորմի:

Պատարագիչ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը քարոզից յետոյ նորից բարձրացաւ աւագ սեղան, շարունակելու սուրբ պատարագը. սարկաւագը՝ առնելով «Ողջոյնը» պատարագչից եկաւ համբուրեց հանգուցեալ Հայրապետի օձեալ աջը. այնուհետև մի առ մի երկիւղածութեամբ

համբուրեցին զգեստաւորուած եպիսկոպոսները, բարձր աստիճանաւորները, պրաւոսլաւ եկեղեցու ներկայացուցիչները, քաղաքների ու հաստատութիւնների պատգամաւորները և այլք:

Զգեստաւորուած արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները և շուրջաւաւորուած սրբազնագործ պաշտօնեայք ս. պատարագի հետ զուգընթացաբար կատարեցին եկեղեցու կարգը: Ս. պատարագից յետոյ ի լուր ամենի կարգացուեց Հայրապետի համար սահմանուած աղօթքն և դագաղը դուրս բերուեց եկեղեցուց աւագ դռնով. թափօրը հիւսիսային կողմից շրջան արեց, սահմանուած չորս հանգիստների կարգը կատարեց և կանգ առաւ զանգաւատան հիւսիսային կողմը, ուր հանգ. Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսի գերեզմանի մօտ փորուած ու պատրաստուած էր դամբարանը: Բացի բազմութիւ պատգամաւորներից ժողովրդի ահաղին բազմութիւն բռնել էր մայրավանքի հրապարակը, շինութիւնների տանիքը, իսկ աւելի երիտասարդները բարձրացել էին ծառերի վերայ:

Գերեզմանի կարգը կատարելիս՝ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը օրհնեց հողը և այգ օրհնութեան հողով տեաւնագրուեց դամբարանը, դագաղը իջեցուեց գերեզման, օրհնութեան հող սփռուեց Հայրապետի մարմնի վերայ, ծածկուեց դագաղը, և գերեզմանի կարգի կատարման զուգընթաց արհեստաւորներն թաղակտայ արին դամբարանը մի անգամ ընդ միշտ ծածկելով Հայրապետի երեսը և երկրաւոր նշխարը, որ միշտ յիշողութեան մէջ կը մնայ բոլոր այն մարդկանց համար, որոնք պատեհութիւն էին ունեցել տեսնել նրան և երջանկութիւն՝ խօսակից լինելու նրա հետ: Վերջին աղօթքից յետոյ կնքուեց Հայրապետի գերեզմանը «Մնչարժ եղիցի» մաղթանքով. և ժամը 2-ին բոլորը, թէ հոգեւորական և թէ աշխարհական խոր տխրութեամբ համակուած՝ ցրուեցին:

Կէսօրից յետոյ ժամը 3-ին բոլոր ներկայացուցիչներն

ու պատգամաւորները հրաւիրուեցին միաբանութեան սեղանատուն, եկան և Տեղակալ Տէր Գէորգ արքեպիսկոպոսը կովկասեան փոխարքայի, Վրաստանի սրբազան էկզարխի ներկայացուցիչները, Երևանի նահանգապետ Գրաֆ Տիգէն-հաւուզէն և այլ բարձրաստիճան անձինք։ Տեղակալ Սըրբազանը օրհնեց սեղանը և սկսուեց հոգեհացը խորին լռութեան մէջ, որը ընդհատեց Նորին բարձր Արքազնու-նութիւնը առաջարկելով յոանկայս յարգել հանգուցեալ Հայրապետի յիշատակը, որի տխուր մահուան առիթով խմբուած են։

Նորին Արքազնութիւնը ասաց. Բարբարոս բռնակալները երեսօից այնքան անչքացած Մայր Աթոռը և նսեմացած Հայրապետութիւնը բարձրացաւ և իւր պատշաճաւոր դիրքն ու հեղինակութիւնն ստացաւ սկսեալ այն օրից, երբ Ռուսիոյ մեծազօր կայսրութեան հովանաւորութեան տակ մտաւ. իսկ այժմ թագաւորող մեր Ամենողորմած կայսր Նիկոլայ Ալէքսանդրիչ, իբրև սիրող հայր և մեծ հովանաւոր իւր բոլոր հպատակների, որոնց հետ և մեր, ի դէմս փոխարքայի, որ իբրև իմաստուն կառավարիչ իւր Վեհապետի կամակատարն է, այնպիսի շնորհով պանծացրեց հայ ս. եկեղեցին, որ այսօր փոխարքայի կողմից հայրապետի թաղմանը ներկայացուցիչ տեսնում ենք Նորին Պայծառափայլութեան քաղաքացիական մասի օգնական սենատոր է. Վատացիին, և Պայծառափայլ փոխարքայի գեներալ յանձնակատար գեներալ-մայօր Ա. Ի. Լազարելին — յայտնի հերոս գեներալ-ադրիւտանդ հանգ. Ի. Գ. Լազարելի որդուն — Այս համառօտ տեսութիւնից յետոյ Նորին Արքազնութիւնը ամենահպատակ և ակնածալից երախտագիտութիւն յայտնեց առ կայսերական գահն Մեծին Ռուսիոյ և առաջարկեց յոանկայս օրհնել և արևշատութիւն մաղթել Նորին կայսերական Մեծութեան Նիկոլայ Բ. Ալէքսանդրովիչի, Թագուհի կայսրուհիներին և Օգոստափառ Թագածաւառանդին. աղօթելով, որ Աստուած անսասան պահպանի ռուսայ

կայսերութիւնն ու կայսերական տունը. բոլոր սեղանա-
կիցները ձայնակից եղան մաղթանքին ասելով «ամէն»:

Նորին բարձր Սրբազնութիւնը երախտագիտական
շնորհակալութիւն յայտնեց Կովկասեան փոխարքային և
Վրաստանի էկզարխին ի դէմս նրանց ներկայացուցիչների,
Երևանի նահանգապետ Գրաֆ Տիգէնհաուզէնին, որ իբրև
նահանգապետ՝ էջմիածնի ուրախութեան առաջին ուրա-
խակիցն և վշտին՝ առաջին վշտակիցն է լինում. Գեներալ
Ա. Ի. Լազարևին, ներքին գործոց նախարարութեան աս-
տիճանաւոր Ա. Վ. Պետրովին, Թիֆ. ազնուականութեան
ներկայացուցիչին և քաղաքների քաղաքագլուխներին,
քաղաքների և հաստատութիւնների հայ և օտարազգի
ներկայացուցիչներին:

Բարձր Սրբազան էկզարխի ներկայացուցիչ Սրբազան
Գրիգորին դարձաւ դէպի Տեղակալ Սրբազանը ասաց.

Ի Տէր հանգուցեալ Մատթէոս Սրբազնագոյն կաթու-
ղիկոսի մահուամբ հայ եկեղեցու վշտին և սգին հաղորդ է
և պրաւոսլաւ եկեղեցին. որովհետև հայոց եկեղեցու Լու-
սաւորիչ սուրբ Գրիգորը տօնուով է օրթողոքս պրաւոսլաւ
եկեղեցում՝ Ս. Հայրապետի հետ, որովհետև օրթողոքս-
պրաւոսլաւ եկեղեցին իւր քոյր հայ եկեղեցու հետ մի է
հաւատով ի Քրիստոս, և ս. պատարագին երկու եկեղե-
ցիներն էլ ասում են. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», և
պատասխանում. «արժան և իրաւ, մեք մի եմք ի Քրիստոս»:

Արդ աղօթենք, որ մեր քոյր հայ եկեղեցու համար
այս տխրութեան և սգոյ օրերից յետոյ Աստուած Ս. Գրի-
գորի աթոռին թող պարգևի արժանաւոր յաջորդ և Տէրը
կարողութիւն և զօրութիւն տայ Տեղակալ Բարձր Սրբազան
Գէորգ արքեպիսկոսին, որ մինչև նոր Հայրապետի կար-
գուելը, իւր իմաստուն կառավարութեամբ ամօրի հայ
ժողովրդի և եկեղեցու վիշտը:

Փոխարքայի օգնական և ներկայացուցիչ սենատոր
է. Ա. Վատացին նոյնպէս դառնալով դէպի Տեղակալ

Սրբազան հայրը, յայտնեց փոխարքայի և իւր ցաւակցութիւնը ի Տէր հանգուցեալ Հայրապետի մահուան առիթով՝ բարեմաղթելով Նորին Սրբազնութեան ոյժ և կարողութիւն իւր ծանր պարտքը կատարելու, մինչև հայ եկեղեցու արժանաւոր հովուապետի ընտրութիւն:

ՄԱՄՈՒԼԸ ՀԱՆԿՈՒՑԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՍՍԻՆ

Մշակ № 277.

Եւ այսպէս հազ'ն բոլորեց մէկ տարի, երբ Մատթէոս II իւր ձեռքերի մէջ ընդունեց Հայոց եկեղեցու կառավարութեան ղեկը, երբ սկսել էինք զգալ, որ այդ ղեկը կարող և ձեռնհաս անձի ձեռքումն է, երբ արդէն երևում էին նշանները, որ Լուսաւորչի Գահի վրա նստած է մի արժանաւոր յաջորդ, որ տքնում և աշխատում էր կարգի բերել, կանոնաւորել եկեղեցու և նրա հետ կապված կրթական, լուսաւորական, ազգային գործերի քայքայված և անկերպարան դրութիւնը — ահա այդ իսկ լուսապէին մենք ստանում ենք նրա մահվան գոյժը:

«Մատթէոս II-ի մահուամբ Հայոց եկեղեցին և հայ ժողովուրդը կրում են մի ծանր հարուած, անփոխարինելի կորուստ:

«(Նա) իբրև սահմանադրական և ժողովրդասէր Հայրապետ, համաձայն Հայոց եկեղեցու ժողովրդական և համայնական սկզբունքների, որոշ ծրագրով և ուղղութեամբ (էր կամենում գործել):»

«Մատթէոս II ունէր և մշակել էր որոշ ծրագիր. իր հայրապետական գործունէութեան համար: Նա նոր էր սկսել գործադրել այդ ծրագիրը, որի իրականացումից մեծապէս պէտք է օգտուէր թէ Հայոց եկեղեցին և թէ ժողովուրդը, բայց անագորոյն մահը կործանեց այդ ամենը և նորից մասնեց եկեղեցին ու ազգային գործերը անկերպարան վիճակի

Եւ Հայոց եկեղեցին զրկուեց այսօր մեր Հովուապետից, որից նա մեծամեծ բարիքներ և բարենորոգումներ էր ակնկալում:

Հորիզոն № 277.

Հայոց Մայր Աթոռի զանգակը Արարատեան դաշտից գուժեց ընդհանուր հայութեանը՝ թէ ի Տէր հանգեաւ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսը՝ Մատթէոս Երկրորդ:

Խոնջացած ու յոգնած իջաւ ազնիւ գլուխը, որ ճերմակել էր տառապանքների փոթորիկներում՝ միշտ մնալով բարձր ու անարատ և օծուել էր ազգի ընդհանրութեան բուռն սիրով:

Դադարեց իր ժողովրդի սիրով ու վշտով բարախող մեծ սիրտը, լռեց հայրական ձայնը, որ զաւակներին կանչում էր դէպի լոյս ու արդար աշխատանք, դէպի կարգ ու օրէնք, դէպի քրիստոնէական մարդասիրութիւն ու եղբայրութիւն:

Սուգի սև քօղն իջաւ Լուսաւորչի գահի և Հայոց սրտերի վրայ:

Յաւիտենական հանգիստ առաքինի մարդուն և Մաքուր Հովուապետին:

Кавказский телеграфъ-ը № 1.

«Որպէս մարդ Մատթէոս II-ը, այն ամենքի վերայ որ նրա հետ անձնական յարաբերութիւն ունէին, առաջ էր բերում հիասքանչ տպաւորութիւն մաքուր կանացի քնքշութեամբ և իւր նրբանկատ վերաբերմունքով, Անսահման քաղցրութիւնը, որ փայլում էր նրա տխուր աչքերում, խառն միանգամայն այն խիստ և անընկճելի երկաթեայ եռանդի արտայայտութեամբ, հենց որ գործը դառնում էր իւր հօտի շահերին—նուաճում էր ամենին, որ բաղդ էր ունենում խօսակցելու հանգուցելու հետ, թէև մի քանի վայրկեան:

Որպէս Կաթողիկոս Նա հանդիսանում էր փորձուած վարչի (ադմինիստրատոր) յատկութեամբ, լաւ տեղեակ հայ ժողովրդի և եկեղեցու կարիքներին և, որ գլխաւորն է, խորին համոզմամբ ջատագով օրինականութեան»:

«КАВКАЗ»-ը 283.

«Իւր բարձր դիրքում Մատթէոս II Կաթողիկոսը, պաշտօնի մէջ մտնելու առաջին իսկ քայլերից, հանդիսացաւ կարգի ու օրինականութեան խիստ կողմնակից և եկեղեցու ու պետական իշխանութեան միջև լիակատար համաձայնութեան համար ջանացող»:

Հորիզոնից քաղուած,

«Тифл. ИСТОКЪ» ը իր վերջին համարում Վեհ. Կաթողիկոսի մահւան առիթով գրւած յօդւածում ասում է.

«Հանգուցեալ Պատրիարք-Կաթողիկոսը հայոց եկեղեցու ամենալաւագոյն բարձրաստիճան հոգևորականներից մէկն էր. նա կրթւած էր այդ դարաւոր եկեղեցու բոլոր աւանդութիւնների խստիւ կատարելու ոգով. նա եռանդուն պաշտպան էր նրա օրինական իրաւունքների և արտօնութիւնների: Իբրև այդպիսին նա վայելում էր լայն ժողովրդականութիւն և հայերի անկեղծ յարգանքը, որ այդ պատճառով էլ բոլոր երկներից հաւաքւած հայ պատգամաւորները միահամուռ կերպով կոչեցին նրան պատրիարքական ծանր և պատասխանատու պաշտօնի: Նա օտար չէր նաև հայ գրականութեան համար: Նա հռչակւած էր նաև իբրև փայլուն հոգևոր և դեռ վարդապետ ժամանակը յաճախ հանդէս էր գալիս իր քարոզներով, հրաւիրելով իր հօտին ինքնագործունէութեան, ինքնագիտակցութեան, մի կողմ նետելով այն ամենը, ինչ թւում է խաբուսիկ և չի ապլիս հոգևոր սնունդ»:

Նոյն թերթի մի այլ յօդւածում առաջ է բերուած V. Berard-ի կարծիքը:

«Իզմիրլեանի կեանքի մաքրութիւնը, նրա բարի գոր-

ծեր կատարելու հակումները և առաքելական գործունեութիւնը, — գրում է V. Berard-ը (տես «La politique du Sultan») — ստեղծեցին նրա մասին սրբի համբաւ ինչպէս քրիստոնեաների, նոյնպէս և մահմեդականների մէջ: Եւրոպան և նրա ներկայացուցիչները գնահատում էին նրա խելքը և ուղղամտութիւնը: Հաստատուն հայրենասէր Իզմիրլեանը ընդունակ չէր շողորթելու ազգութեան կամ հէնց իր վերաբերեալ ժողովրդական կրքերը և կամ անմիտ երևակայութիւնը. բայց նա ընդունակ չէր նաև այն խայտառակ միսսիային, որ Ելզըզ-Քեօսկը յանձնարարում էր նրա նախորդներին»:

— Վրաց «Սախ. Գաղէթին» տալով հանգուցեալ վեհ. Կաթողիկոսի համառօտ կենսագրութիւնը, ի միջի այլոց գրում է. «Հայ ժողովուրդը հանգուցեալ Կաթողիկոսից շատ սպասելիքներ ունէր, յատկապէս հայոց դպրոցների բարեկարգութիւնը... բայց անագորոյն մահը շատ շուտ խլեց ժողովրդից այս հասկացող և հայ ազգը սիրող անձին»:

«Русск. Вѣдомости»-ի մէջ Արէլեան ասում է.

«Էջմիածնում, դեկտ. 11-ին վախճանված՝ 65 տարեկան հասակում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II սիրելի էր հայերին ոչ միայն նրանով, որ նա հայ եկեղեցու Հովուապետն էր, այլ առանձնապէս նրանով, որ ժողովուրդը յանձին նրա տեսնում էր լաւագոյն տրագիցիաների և իր ակնկալութիւնների կրողին: Երբ Իզմիրլեանը Կ. Պօլիս հայոց պատրիարք էր, նա կողմնակից էր եկեղեցական հաստատութիւնների ժողովրդականացնելուն, և երբ նա Կաթողիկոս դարձաւ, նա մտցրեց հրապարակային կանոնաւոր հաշւետուութիւն հայ եկեղեցու գործավարութեան մէջ և կօնդակ հրատարակեց, որպէսզի թեմական առաջնորդները ընտրվեն այսպէս կոչված թեմական խորհուրդների ձեռքով, ուրիշ խօսքով՝ նա վերականգնեց առաջնորդներ ընտրելու հին ժողովրդական իրաւունքը»:

Հանգուցեալի բնորոշ գիծը դէպի իր ժողովուրդը և համայն մարդկութիւնը տածած սէրն էր: Յայտնի է այն փաստը, որ Կ. Պօլսում պատրիարք եղած ժամանակ հանգուցեալը Արդիւլ-Համիդի առաջարկած զանազան պարգևներին չպատասխանում էր՝ զեկուցելով հայերի իրաւազուրկ դրութեան և թիւրքաց կառավարութեան դէպի նրանց ցոյց տուած յանցաւոր վերաբերմունքի մասին:

Իր ժողովրդի պաշտպանութեան համար Թիւրքիայի հայերի կոտորածի տարիներում անվախ «Երկաթէ Պատրիարքը» աքսորվեց Երուսաղէմ, որտեղից 12 տարի յետոյ նրան ազատեց թիւրքական յեղափոխութիւնը:

Ընդամին հանգուցեալը աչքի էր ընկնում դրամական հաշիւները մէջ իր բացարձակ ազնութեամբ: Նոյնիսկ նրա անձնական տրամագրութեան տակ դրվող գումարները նա մտցնում էր եկեղեցու ընդհանուր եկամտի մէջ:

Առասպելական Խրիմեան Հայրիկի մահից յետոյ, որին Իզմիրլեանը զիջում էր տաղանդի մեծութեան և ոյժի մէջ, հայ ժողովուրդը կանգ առաւ Իզմիրլեանի վրա: Դժբաղդաբար, հայ ինտելիգէնցիան արձագանք չը տուեց իր Հովուապետի կոչին՝ օգնել իրան դժուարին պարտականութիւնները կատարելու մէջ, իսկ կղերական թերթերից մինը համարեա ամեն շաբաթ թունաւորում էր ազնիւ Կաթողիկոսի կեանքը զանազան յարձակումներով, որոնց իր դրութեան սրտածառով նա չէր կարող պատասխանել:

Սակայն հաստատ արձան նրան կը լինի հայ ժողովրդի դէպի նա ունեցած ընդհանուր սէրը:

«ԲԵՎԵ»-ը գրում է. «Դեկտ. 11-ի դիշերը էջմիածնում վախճանվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Իզմիրլեանը: Մահը տեղի ունեցաւ կարճատե հիւանդութիւնից, յետոյ՝ սրտախտից, սրտի կաթուածից:

Մատթէոս II-ը ծնվել է Կ. Պօլսում 1845 թ., ուր և ստացաւ միջնակարգ և բարձրագոյն կրթութիւն: 1876 թ. հանգուցեալ Կաթողիկոսը եպիսկոպոս ձեռնադրվեց էջ-

միաձնուժ Գէորգ IV կաթողիկոսից. Կ. Պօլսի պատրիարք
ընտրվեց 1894 թ.ին:

Պատրիարք եղած ժամանակ նա յաճախակի հանդէս
էր գալիս իբրև պաշտպան իր ժողովրդի թիւրքաց կառա-
վարութեան ճնշումների դէմ:

Երբ 1894 թ. սկսվեց հայկական անխնայ ջարդը
Հայաստանում՝ և՛ Փոքր-Ասիայում, Մատթէոս պատրիարքը
իր ձայնը հնչեցրեց թիւրքական գաղանձութիւնների և
նախկին Պատրիարք Աբդուլ-Համիդի դէմ, որ հանգստու-
թեամբ դիտում էր թիւրքիայի հայկական ողբերգութեան
սարսափները: Պատրիարքը դիմեց Եւրօպային և բողոքեց
հայերի կոտորածի դէմ, և արիութեամբ պաշտպանում էր
իր ժողովրդին, որի համար և Աբդուլ-Համիդը զրկեց նրան
պատրիարքութիւնից՝ և արքայից Երուսաղէմի վանքը 11
տարով: Բայց և վանքի արքայութեամբ Մատթէոսը շարունա-
կեց պաշտպանել իր հօտը, որի համար ստացաւ «Երկաթէ
Պատրիարք» կոչումը:

1908 թ. նոյեմբ. 19-ին Իզմիրիւն ընտրվեց Ամենայն
Հայոց կաթողիկոս՝ Մատթէոս II անուան տակ: Այս
ընտրութեան ժամանակ լուրեր էին պտտվում՝ իբր նա չի
հաստատվի այդ կոչման մէջ ուսու կառավարութիւնից:
Հանգուցեալ Վեհափառի անցեալ տարի Պետերբուրգ գնալը
և նրան ցոյց տուած հանդիսաւոր հանդիպումը, նաև
Բարձրագոյն ընդունելութիւնը հերքեցին այդ լուրերը,
որոնք հետեանք էին այն շշուկների՝ թէ ներքին գործերի
մինիստրութեան մէջ մտադրութիւն կայ նոր կանօններ
մշակել կաթողիկոսի ընտրութեան մասին: Մատթէոս II-ի
օծումը կատարվեց Էջմիածնում 1909 թ.:

«Մշակ»